# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 36 (1586) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 6, 2012
VOLUME 32, NO. 36 (1586) SATURDAY, OCTOBER 6, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ**

## ԵՐԲ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ Է ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ***

Թուականէս երկու տարի առաջ, 2010-ին, նախաձեռնուեցաւ Պարսկաստանի դէմ՝ ՄԱԿ-ի եւ անոր զուգահեռ, ԱՄՆ- Արեւմտա-Եւրոպայի կողմէ բանաձեւուած եւ շուտով գործադրութեան դրուած հարուածային պատժամիջոցներուն:

ՄԱԿ-ը, բաղաքականօրէն մեկուսացման ենթարկեց Պարսկաստանը: Իսկ ԱՄՆ եւ Արեւմտեան Եւրոպան՝ դրամատնային շրջափակման տակ առին զայն: Ինչո՞ւ: Որովհետեւ, Պարսկաստան կը մերժէր դադրեցնել իր հիւլէական զգայուն գործընթաց-ծրագիրը: Գործընթաց՝ որ (համաձայն անոնց ենթադրութիւններուն) ան կը հետապնդէր հիւլէական ուժ դառնալու ծրագիր, թող որ, ան միանշանակ կը պնդէր միշտ, թէ իր այդ հիւլէական ուժը պիտի բացառաբար օգտագործէր իր երկրի տնտեսութեան զարգացման միջոց որպէս: Բայց հաւատացողը՝ ո՞ւր:

Դրամատնային շրջափակումը կ'ենթադրէր բարիւղի վաճառումի արգիլում: Արգիլուեցա՛ւ: Քարիւղի վաճառքէն՝ դրամատուներու մէջ պահ դրուած վճարումներու գործառնութեանց սառուցում: Սառեցա՛ւ: Նաեւ՝ սակարանային դրամական փոխանցումներու գործընթացի դադարեցում: Այսինքն, բարիւղը որ ծախուեցաւ, անկարելի դարձնել փոխարժէքին առաքումը դէպի երկիր: Դադրեցա՛ւ: Ներկայ կացութի՞ւնը ...:

Համաձայն ԱՄՆ-ի Պետական խօսնակ Վիքթորիա Նիւլանտի ընթացիկ շաբթուան Երկուշաբթի օրով կատարած գնահատութեան, «շնորհիւ միջազգայնօրէն նախաձեռնուած պատժամիջոցառումներուն՝ մէկ տարուան ընթացքին, պարսկական դրամանիշը ութսուն տոկոս, իսկ ԱՄՆ-ի դրամանիշի հետ բաղդատած մէկ երրորդ արժէչափով անկում արձանագրած է, ինչ որ կը վկայէ այդ պատժամիջոցառումներուն գործնական արդիւնաւէտութիւնը»: Ներկայ դրութեամբ սակարանային իր արժէքով, պարսկական 35,800 ռիալը արժէ մէկ տոլար: Անկում մը՝ որ Պարսկաստանի պատմութեան մէջ իր նախընթացը ունեցած չէ:

Անկում՝ զոր Նախագահ Ահմէտի Նէժատի՝ Թեհրանի մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին հանգամանաւոր կերպով մեկնաբանած է որպէս, «իր երկրի դէմ աշխարհով մէկ շղթայազերծուած, չի հրապարակուած տնտեսական ընդհատակեայ պատերազմ մը, որուն Արեւմուտքը նախաձեռնած է»:

*Շար.ը էջ 18*

## ՕՍԿԱՆԵԱՆ ԶՐԿՈՒԵՑԱՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹԻՒՆԷՆ



*Վարդան Օսկանեան Խորհրդարանի ամպիոնէն*

*Հայաստանի Ազգային Ժողովի «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան անդամ, նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան զրկուեցաւ պատգամաւորական անձեռնմխելիութիւնէն:*

*Հոկտեմբեր 2-ին փակ եւ գաղտնի քուէարկութեամբ, Ազգային Ժողովը բաւարարեց ՀՀ գլխաւոր դատախազի համապատասխան միջնորդագիրը, որուն ի նպաստ քուէարկեցին 64, դէմ՝ 6 պատգամաւոր, մէկ քուէաթերթիկ նկատուեցաւ անվաւեր:*

*Քուէարկութեան մասնակցեցան 71 պատգամաւորներ: «Բարգաւաճ Հայաստան», «Դաշնակցութիւն», «Ժառանգութիւն» եւ Հայ Ազգային Գոնկրէս խմբակցութիւնները հրաժարեցան մասնակցիլ քուէարկութեան:*

*Օր մը առաջ, Վարդան Օսկանեանի պատգամաւորական անձեռնմխելիութիւնը վերցնելու առաջարկով Ազգային Ժողով դիմած Աղուան Յովսէփեան փորձեց հիմնաւորել իր միջնորդութիւնը եւ պատասխանեց պատգամաւորներու հարցերուն: Սակայն, Յովսէփեանի բացատրութիւնները համոզիչ չէին, մանաւանդ երբ ան յայտարարեց թէ, իրենք կը փորձեն պաշտպանել Օսկանեանի կողմէ ստեղծուած «Սիվիլիթաս» հիմնադրամի իրաւունքները՝ Օսկանեանէն: Դատախազը յայտարարեց թէ, Օսկանեան իւրացուցած է Ամերիկացի բարերար Ճոն Հանթսմանի կողմէ «Սիվիլիթասին»*

*Շար.ը էջ 4*

## ՀԱԽ-Ի ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՅԵԼՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ

*ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց յառաջիկայ Նոյեմբեր 6-ին տեղի ունենալիք Նահանգային Խորհրդարանի ընտրութիւններուն առթիւ իր զօրակցութիւնը վայելող թեկնածուներու ցանկը: Այս թեկնածուները կը հանդիսանան Հայ համայնքի բարեկամները ու կը հետապնդեն հայութիւնը յուզող հարցերը:*

*Նահանգային Խորհրդարանի 12-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Ֆրեզնոյի մօտակայ քաղաքները՝ Հանրապետական **ՔՐԻՍԹԻՆ ՕԼՍԸՆ.***

*Նահանգային Խորհրդարանի 35-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Սանթա Պարպարա եւ մօտակայ քաղաքները՝ Նախկին Լիբանանահայ եւ Հանրապետական **ԽԱՉԻԿ ԱՇՃԵԱՆ.***

*Նահանգային Խորհրդարանի 39-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Սան Ֆերնանտօ Հովիտի արեւելեան մասը, Նորթ Հոլիւտ, Սանլանտ-Թահունկա՝ Դեմոկրատ **ՌԱՈՒԼ ՊՈՔԱՆԵԿՐԱ***

*Նահանգային Խորհրդարանի 41-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Փասատինան եւ մօտակայ քաղաքները՝ Դեմոկրատ **ՔՐԻՍ ՀՈԼՏԸՆ.***

*Նահանգային Խորհրդարանի*

*Շար.ը էջ 4*

## Ս.Դ.Հ.Կ. 125 ԱՄԵԱԿ
## ՏՕՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՀՆՉԱԿԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

*Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 125-ամեակի հանդիսութեանց ծիրէն ներս՝ Հինգշաբթի Սեպտեմբերի 27, 2012, երեկոյեան ժամը 8ին շահեկան երեկոյթ մը տեղի ունեցաւ նուիրուած Հնչակեան արխիւներուն:*

*Արդարեւ, խուռներամ հասարակութիւն մը փութացած էր Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահը, հաղորդակից դառնալու պատմական մեծ նշանակութիւն ունեցող մայր կուսակցութեան արխիւային իրավիճակին:*



*Ելոյթ Կ'ունենայ Տոքթ. Եղիկ Ճէրէճեան*

*Ընդհանուր ներկաներուն մէջ կը նշմարուէին Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք.ի ներկայացուցիչ Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայ Կաթողիկէ Համայնքի ժողովրդապետ Հայր Գրիգոր Վրդ. Շահինեան, Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամներ ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան եւ Գրիգոր Խոտանեան, ինչպէս նաեւ շրջանի վարիչ մարմնի, քոյր կազմակերպութեանց եւ հայ մամուլի ներկայացուցիչներ:*

*Հանդիսութեան կանուխ ժամանողներն ու այնուհետեւ աւարտին՝ երեկոյի մասնակիցները ծանօթացան սրահին անկիւնը զետեղուած արխիւային արժէք ներկայացնող որոշ ցուցանմոյշներու, ինչպէս նաեւ Հնչակեան հասարակական անուանի գործիչ Ստեփան Սապահ Գիւլեանի (1861-1928) դիմանկարով գորգի մը:*

*Երեկոյթի կազմակերպիչ՝ Ս.Դ.Հ.Կ. Փարամազ մասնաճիւղի ատենապետ ընկ. Թադէոս Քէօրօղլ-*

*Շար.ը էջ 18*

# ԱՅՍ ԴԷՊՔՈՒՄ ՓՈՒԹԻՆՆ ԻՐԱՒԱՑԻ Է

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ժակ Ֆորը, Իգոր Պոպովը եւ Ռոբերտ Բրադկեն Նիւ Եորքում Հայաստանի եւ Ատրպէյճանի արտգործնախարարների հետ առանձին հանդիպումներից յետոյ հանդէս են եկել յայտարարութեամբ, որտեղ գնահատելով խաղաղ կարգաւորմանը կողմերի հաւատարմութիւնը, կոչ են արել նրանց վերադառնալ խաղաղ բանակցութիւնների էութեանը:*

*Համանախագահների այդ յայտարարութիւնը բաւական հետաքրքրական է, յատկապէս նրանց վերջին յայտարարութեան ֆոնին, որ արեցին սաֆարովեան պատմութիւնից յետոյ: Նրանք յայտարարել էին, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը կը շարունակի միջնորդական ջանքը եւ կապը կողմերի հետ:*

*Ներկայում էլ նրանք կողմերին կոչ են անում վերադառնալ բանակցութեան էութեանը:*

*Այսինքն, խօսքը կարծես թէ ոչ թէ բանակցութեան շարունակութեան մասին է, այլ բանակցային որեւէ նոր բովանդակութեան կամ ֆորմատի մասին: Այսինքն, կոչ չկայ շարունակել այն, ինչ կար, այլ խօսք է գնում ինչ որ նոր վիճակի մասին:*

*Այստեղ երեւի թէ արձանագրւում է բանակցային գործընթացում ռուսական միջնորդական առաքելութեան աւարտը, իհարկէ դիւանագիտական նրբութեամբ: Վերջին մի քանի տարիներին Ռուսաստանը փորձում էր կարգաւորել Ղարաբաղի խնդիրը եռակողմ ձեւաչափով հանդիպումների միջոցով: Այդ հանդիպումների միակ արդիւնքը թերեւս կարելի է համարել ատրպէյճանական մի քանի դիվերսիաները եւ հայկական զոհերը: Ռուսաստանի եռակողմ ձեւաչափից որեւէ այլ յիշարժան բան այդպէս էլ չմնաց, բացի հայկական զինուորների ողբերգական մահերից:*

*Եւ թերեւս լաւ է, որ ռուսական միջնորդութեան այդ շրջանը թէկուզ անուղղակի կարծես թէ յայտարարւում է փակուած: Դժուար է ասել, թէ ինչն է այստեղ դեր խաղացել՝ Ֆրանսիան ու ԱՄՆ-ն են պնդել ռուսական «ռուլետկան» դադարեցնելու վրայ, թէ Փութինի վերադարձից յետոյ Մոսկուան որոշակիօրէն վերանայել է իր մօտեցումները: Բանն այն է, որ Մեդվեդեւի եռակողմ ձեւաչափը զգալիօրէն պայմանաւորուած էր ինքնահաստատուելու նրա մղումով, ինչպէս նաեւ նրա շրջապատում ատրպէյճանական նաւթագազային լոբբինգի ակտիւացմամբ:*

*Չի բացառւում, որ Մեդվեդեւն այդպիսով փորձում էր ուժեղացնել իր անձնական դիրքերը ռուսական նաւթագազային կապիտալում, որտեղ ամուր հաստատուած է Փութինը: Ի վերջոյ, Ռուսաստանի իշխանութեան բանալիներից մէկը նաեւ հենց այդ կապիտալի վրայ ունեցած ազդեցութիւնն է: Մեդվեդեւի ձեռքն այդպէս էլ փաստօրէն այդ բանալուն չհասաւ: Իսկ Փութինը թերեւս այդպիսի խնդիր չունի, չունի նաեւ ինքնահաստատման խնդիր, եւ միգուցէ նրա համար ընդունելի է եռակողմ ձեւաչափն ըստ էութեան տանել մարման, առաւել եւս որ փորձառու Փութինի համար պարզ է, որ այդտեղ առաջ գնալու որեւէ շանս Ռուսաստանը չունի, ծուղակում խորանալու հեռանկարից բացի:*

*Այստեղ սակայն առաջանում է այսպէս ասած նոր իրավիճակի խնդիր: Ի վերջոյ, այդ եռակողմ ձեւաչափի տեղը չի կարող դատարկ մնալ եւ ինչ որ բանով, ինչ որ գործընթացով պէտք է լցուի, այլապէս այդ դատարկութիւնը կարող է լցնել պատերազմը: Իսկ դա ամէնից քիչը ձեռնտու է Հայաստանին ու Ղարաբաղին, առաւել եւս ներկայիս սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական վիճակում, երբ պարտութիւնն ունի Հայաստանում լեգիտիմանալու բոլոր շանսերը:*

*Հետեւաբար, նոր գործընթացով պէտք է շահագրգռուած լինի Հայաստանը: Ընդ որում, խօսքը բանակցային գործընթացի մասին չէ, այլ էութեան, ինչպէս յուշում է Մինսկի խումբը: Այսինքն, այստեղ անգամ առաջին հայացքից դեստրուկտիւ թուացող քայլը կարող է պարունակել շատ աւելի մեծ կոնստրուկտիվիզմ, քան ասենք տարատեսակ հայ-ատրպէյճանական հանդիպումները տարբեր մակարդակներում: Գլխաւորը թեման է, որի վրայ կը կառուցուի նոր գործընթացը: Եւ յատկապէս սաֆարովեան իրադարձութիւններից յետոյ, նոր թեմայի ամենաբնական աղբիւրը դառնում է հայկական կողմը: Սա իհարկէ լուրջ ռիսկ է եւ պատասխանատւութիւն, սակայն այլ տարբերակ չկայ: Անընդհատ Ատրպէյճանի ծանր կացութեան մէջ յայտնուելու մասին ինքնագոհ յայտարարութիւնները չեն, որ ակնկալւում են կամ պէտք են Հայաստանին:*

*Հայաստանի առաջ բացուել է բանակցային գործընթաց կոչուածում նորարարութիւններով հանդէս գալու լուրջ հնարաւորութիւն, որից յետոյ միայն Ատրպէյճանը կարող է շօշափելիօրէն զգալ իր վիճակի ծանրութիւնը: Սակայն Հայաստանն առայժմ ցոյց չի տալիս այդ հնարաւորութիւնից օգտուելու կարողունակութիւն: Մասնաւորապէս, դրա առաջին քայլը կարող էր եւ թերեւս պէտք է լինէր ղարաբաղեան թեմայով ակտիւ ու բաց հասարակական քննարկումների նախաձեռնութիւնն ու մտքերի գեներացիան, ապահովելով հասարակական հող պաշտօնական քաղաքականութեան մանեւրների համար: Մինչդեռ, այդօրինակ գեներացիայի փոխարէն, պաշտօնական Երեւանը կարծես թէ գնաց ու շարունակում է ընթանալ հակառակ՝ կոնսերուացիայի ճանապարհով:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ՕՍԿԱՆԵԱՆԻ ՕՊԵՐԱՑԻԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՑ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԿԱԴՐԵՐՈՎ

*ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԷԿԵԱՆ*

*Օսկանեանի գործով խորհրդարանական քուէարկութեամբ Սերժ Սարգսեանը վերահաստատեց, որ ՀՀԿ-ն բացառապէս ծառայում է իրեն եւ իրավիճակն իր կողմից լիովին վերահսկելի է:*

*Սրանով, փաստօրէն, փորձ արուեց յստակեցնել Ռոբերդ Քոչարեանի՝ ՀՀԿ-ում ունեցած «սվոյ» կադրերի միֆը՝ հասկացնելով, որ նախկիններին ծառայածները շատ վաղուց արդէն ծառայում են ներկաներին, իսկ «կեցցէ՛ արքան» կարգախօսը կենսակերպ է, ոչ թէ սկզբունք:*

*Թերեւս պատահական չէ, որ Վարդան Օսկանեանի օպերացիայի բոլոր գլխաւոր դերակատարները այս կամ այն կերպ ընկալւում են Ռոբերդ Քոչարեանի կադրեր: Դա հաւասարապէս վերաբերում է եւ՛ իրադարձութեան գլխաւոր հերոս նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանին, եւ՛ գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանին, եւ՛ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանին, ով, ի դէպ, այդպէս էլ Օսկանեանի գործով քննարկումների ժամանակ ԱԺ չեկաւ ու որեւէ գնահատական չհնչեցրեց, եւ՛ ՀՀԿ ցուցակի պատգամաւորներին, ում մասին դեռեւս Մայիսի 6-ի ընտրութիւններից առաջ Քոչարեանն ասում էր, թէ նրանք բոլորը ժամանակին իր խորհրդով են ներգրաւուել իշխանութեան ցուցակներում: Անիմաստ է մեկնաբանել, թէ քաղաքական ինչպիսի հարուած կը ստանար գործող նախագահը, եթէ Օսկանեանի քուէարկութիւնը տապալուէր: Փաստօրէն, նուազագոյն 66 մամակցի փոխարէն Սերժ Սարգսեանը կարողացաւ քւորումն ապահովել 71 ձայնով եւ անհրաժեշտ 34-ի փոխարէն արձանագրուեց 64 «կողմ»: Սա անուղղակի պատասխան է այն պնդումներին, թէ ՀՀԿ-ում մեծաթիւ են նախկին նախագահ Քոչարեանի կադրերը, եւ նա այսօր վերադարձի համար բաւարար իշխանական ռեսուրս ունի: Իսկ հանրային ռեսուրսը մեր երկրի պարագայում մշտապէս ածանցւում է իշխանականին:*

*Եւ քանի որ Օսկանեանի քաղաքական գործունէութիւնը մշտապէս նոյնացւում է քոչարեանական միսիոնարութեան հետ, ապա այս օպերացիայի կադրերը թերեւս պատահական չեն: Միաժամանակ սա հաղորդագրութիւն էր ուղղուած երկրորդ նախագահին, որ նրա վերադարձի բոլոր շանսերն սպառուած են, ռեսուրսները՝ վատնուած: Քոչարեանն, իհարկէ, կարող է մանեւրել՝ ասելով, որ ինքը չի փորձել իշխանութեան մէջ ունեցած իր կադրային ռեսուրսը օգտագործել Սերժ Սարգսեանին ընդդիմանալու համար: Գուցէ իրականում այդպէս էլ կայ, բայց դա քիչ հաւանական է, քանի որ բոլոր դէպքերում Քոչարեանին յատուկ է իւրայիններին պահելու գործելաոճը: Իսկ գուցէ իրականում Քոչարեանը այլ հաշուարկնե՞ր ունի, եւ դրանո՞վ էր պայմանաւորուած մինչ խորհրդարանական քուէարկութիւնը նրա խորհրդաւոր լռութիւնը: Բայց որ Քոչարեանը կը խօսի ու գնահատականներ ու մի շարք հարցերի պատասխաններ կը տայ Օսկանեանի գործի ու նախագահական ընտրութիւնների հետ կապուած՝ դրանում թերեւս կարելի է չկասկածել:*

*«ՀԱՅԵԼԻ»*

# ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀՈՒԱԾՔ

*Ինչո՞ւ մեզանում ոչ մի կերպ չի ձեւաւորւում քաղաքական մտածողութիւն: Երբ բանը հասնում է սեփական մաշկին, բոլորը դառնում են խիստ զգուշաւոր ու կենցաղային՝ մոռանալով, որ քաղաքականութեամբ զբաղուելը որոշակի կանոններ է ենթադրում եւ բոլորովին այլ պահուածք: Ասենք՝ ինչո՞ւ է քաղաքականութիւն մտած, անգամ նախագահի պաշտօնին յայտ ներկայացնող անձն իրեն այնպէս պահում, ինչպէս կը պահէր, օրինակ, մի շատ սովորական դասախօս, եթէ նրան բռնէին կաշառք վերցնելիս, կամ մի հասարակ հաշուապահ, ով, ենթադրենք, օրէնքը չիմանալու պատճառով ինչ-ինչ խախտումներ է արել ու «քաշուել»: Ինչո՞ւ ՀՀ նախկին արտգործնախարարը, ով մասնագիտութեամբ դիւանագէտ է, երկար ժամանակ եղել է իշխանութեան մէջ ու շատ բան տեսել-ապրել, իրեն պահում է սեփական փոքրիկ բարեկեցութիւնը կորցնել վախեցող շարքային քաղաքացու նման: Մի՞թէ այս մարդիկ չեն կարդացել, չեն ուսումնասիրել պատմութեան դասերը, չգիտեն, որ քաղաքական պայքարը դաժան փորձութիւններ է ենթադրում, առանձնայատուկ տոկունութիւն, հալածանքների ու զրկանքների նկատմամբ այլ՝ ոչ կենցաղային մօտեցում:*

*Այո, Վարդան Օսկանեանի պահուածքն Ազգային ժողովում մարդկայնօրէն կարեկցանքի էր արժանի, եւ ականատեսները չէին կարող չցաւել նրա համար: Բայց դա քաղաքական գործչի, իրեն ընդդիմութիւն պատկերացնող քաղաքական ուժի ներկայացուցչի պահուածք չէր: Այդ յուզումնալից խօսքն ու պատգամաւորների խղճահարութեանն ապաւինող տօնը մի բանի մասին էր վկայում՝ մարդը վախենում է եւ, կարելի է ասել՝ գրեթէ փոշմանել է քաղաքականութիւն մտնելու համար: Մինչդեռ իրական քաղաքական գործիչը թերեւս «ուրախանար» այս պատեհ առիթից, որը նրա քաղաքական կարիերայում կարող էր վճռորոշ նշանակութիւն ունենալ եւ նոր կենսագրութեան սկիզբ դառնալ:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# «ԵԹԷ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏՈՒԻՑ ՑԱԾՐ Է ԻՆՁ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ, ԴԱ ԱՐԴԷՆ ԻՐ ԳՈՐԾՆ Է».- ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ եթէ Նախագահ Սերժ Սարգսեանի պատուին ցածր է իրեն պատասխանելը, դա արդէն նրա՝ Նախագահի գործն է:

«Վերջապէս պատիւ ստացայ Սերժ Սարգսեանին ուղղուած նամակի պատասխանը ստանալ ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանի միջոցով: Շնորհակալ եմ Աբրահամեանին պատասխանի համար, որովհետեւ նախորդ անգամ գրաւոր պատասխան չէր եղել»,- ասաց նա:

«Իմ շատ սովորական, շատ պարզ նամակների հարցադրումների հարցով տուն-տունիկ խաղալու, մէկը միւսին հասցէագրելու, ինձ յուզական համարելու փոխարէն, թող պատասխան տան այդ հարցերին»,- աւելացրեց Րաֆֆի Յովհաննիսեանը:

Յիշեցնենք, որ օրերս Րաֆֆի Յովհաննիսեանը 15 կէտից բաղկացած նամակ էր ուղարկել ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, որի պատասխանը ստացել էր ՀՀ ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանից:

Հարցին, թէ արդեօ՞ք Րաֆֆի Յովհաննիսեանին բաւարարում է ստացուած պատասխանը, նա պատասխանեց, որ ինքը ցանկանում էր ստանալ ոչ թէ ընդհանրական, յուզական, հռչակագրային, դեկլարատիւ գնահատական պատասխան, այլ կէտ առ կէտ բոլոր հարցերի պատասխանները:

«Թող պատասխանեն ոչ թէ ինձ, այլ շարքային քաղաքացուն, ում քուէն նորից պէտք է խնդրեն մի քանի ամիս անց: Թող ասեն՝ ճիշդ է, թէ՝ սխալ, որ ոչ թէ 5 այլ նուազագոյնը 500 դպրոցի համալսարանի , գիւղապետարանի, քաղաքապետարանի եւ հանրային սեփականութիւն հանդիսացող մնացած շէնքերի վրայ կայ մի կուսակցութեան գինանշան, դրասենեակ, տարբերանշան, լոգունգ: Անկախ նրանից՝ Հանրապետական է, թէ՝ մէկ այլ կուսակցութեան»,- ասաց նա:

Րաֆֆի Յովհաննիսեանը պահանջում է, որ պատասխան տրուի այն հարցին, թէ գործող որեւէ պաշտօնեայ առաւել եւս կուսակցական պաշտօնեայ ճի՞շդ է, որ կրթահամալիրի հոգաբարձուների խորհրդի նախագահ լինի:

«Եթէ սխալ է, ուրեմն ինքնաբացարկ յայտնէք: Ճի՞շդ է, թէ՝ սխալ, որ պէտք չէ մեր ուսուցիչներին, տնօրէններին աշակերտներին, ուսանողներին, բուժքոյրերին ստիպուած մասնակից դարձնել կուսակցական գործերին՝ ստիպելով տանել հանրահաւաքների: Զինուորին ասել, թէ ո՞ւմ ընտրի ու նրանց բազմակի քուէարկութեան մասնակից դարձնել»,-ասաց նա եւ աւելացրեց, որ այս հարցերը պատասխանի կարօտ են:

# ԺԻՐԱՅՐ ՍԷՖԻԼԵԱՆԸ ՅԱՂԹԵԼ Է ԵԻՐԱԴԱՏԱՐԱՆՈՒՄ



Նախկին քաղաքական բանտարկեալ Ժիրայր Սէֆիլեան

Մարդու Իրաւունքների եւրոպական դատարանը (ԵԴ) վճիռ է կայացրել ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան եւ յօգուտ Ժիրայր Սէֆիլեանի, ով 2006 թուականի Դեկտեմբերին ձերբակալուել էր սահմանադրական կարգը բռնութեամբ փոխելուն ուղղուած հրապարակային կոչեր հնչեցնելու մեղադրանքով եւ մինչեւ 2008-ի Յունիսը մնացել էր անազատութեան մէջ:

ԵԴ-ն արձանագրել է, որ Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատար Ժիրայր Սէֆիլեանի անձնական հեռախօսազրոյցները 2006 թուականի ամռանից ամիսներ շարունակ գաղտնալսելու, այնուհետեւ նրան ազատազրկելու եւ շուրջ 8 ամիս նախնական կալանքի տակ պահելու գործընթացներն իրականացուել են Մարդու իրաւունքների եւրոպական կոնվենցիայի խախտումներով, որի 5-րդ յօդուածով երաշխաւորուած է անձի ազատութեան իրաւունքը, իսկ 8-րդ յօդուածը պետութեանը պարտաւորեցնում է առանց բաւարար իրական հիմքերի չմիջամտել մարդու անձնական կեանքին, հեռահաղորդակցութեանն ու նամակագրութեանը: Այդ խախտումների դիմաց Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է Ժիրայր Սէֆիլեանին վճարի 6000 եւրոյին համարժէք փոխհատուցում:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիօկայանի հետ զրոյցում մանրամասնեց Սէֆիլեանի շահերը ներկայացնող փաստաբան Վահէ Գրիգորեանը, ԵԴ-ն արձանագրել է, որ իր պաշտպանեալին կալանաւորելու եւ կալանքի ժամկէտը շարունակաբար երկարաձգելու համար ներկայացուած չեն եղել բաւարար հիմքեր, եւ դատարանի որոշումները կայացուել են «ստերեոտիպային» հիմնաւորումներով:

# ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵՑ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱԶԳԷՆ ԽԱՉԻԿԵԱՆԸ



Վերջերս ձերբակալուած Վազգէն Խաչիկեան

Իշխող Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) փոխնախագահ Գալուստ Սահակեանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում անդրադառնալով Սոցիալական ապահովութեան պետական ծառայութեան նախկին ղեկավար, հանրապետական Վազգէն Խաչիկեանի ձերբակալութեանը, յայտարարեց, թէ իւրայինների նկատմամբ անհրաժեշտ է աւելի խիստ լինել, քան միւսների:

Վազգէն Խաչիկեանը անազատութեան մէջ յայտնուեց Սեպտեմբեր 28-ին: Նա մեղադրւում է պաշտօնեական կեղծիքի, խարդախութեան եւ խոշոր չափերով իւրացումների մէջ: Խաչիկեանին սպառնում է 4-8 տարուայ ազատազրկում: Ըստ ոստիկանութեան պաշտօնական տեղեկատուութեան, Խաչիկեանը քրէական հետապնդման է ենթարկւում կազմակերպուած խմբով եւ խարդախութեամբ պետական բիւջէից 240 միլիոն 680 հազար 984 դրամ յափշտակելու եւ իւրացնելու համար:

«Մենք պէտք է նաեւ շատ վճռական լինենք մեր իւրայինների նկատմամբ, եւ պատժելու առումով աւելի խիստ պիտի լինենք, որպէսզի հնարաւոր լինի երկրում հետագայ բարեփոխումներն իրականացնել», - ասաց Սահակեանը:

Հարցին, թէ ինչո՞ւ Վազգէն Խաչիկեանը ձերբակալուեց միայն հիմա՝ նախագահական ընտրութիւնների շեմին, կառավարութիւնում նախագահ Սերժ Սարգսեանի յայտնի խորհրդակցութիւնից յետոյ, Գալուստ Սահակեանը հակադարձեց, որ նախաքննական մարմինն է այս փուլում նպատակայարմար համարել այս ձերբակալութիւնը: Ընդգծելով, որ մեր հասարակութիւնը գործող իշխանութիւններին ամէն ինչի համար քննադատելու առիթ գտնում է:

Սահակեանը չհամաձայնեց նաեւ շրջանառուող այն տեսակէտներին, որ իւրայինի ձերբակալութեամբ ՀՀԿ-ն նպատակ ունի հող նախապատրաստել «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) պատգամաւոր, նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանին պատգամաւորական անձեռնմխելիութիւնից զրկելու համար:

# 2050-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԵՐՐՈՐԴԸ ԿԸ ԼԻՆԻ 60 ԵՒ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ

Հայաստանը համարւում է ծերացող երկիր, ինչը նշանակում է, որ տարեցների թիւը ամէն տարի աւելանում է:

Հայաստանի բնակչութեան 15.1 տոկոսը վաթսուն եւ աւելի տարեկան է: Ստեղծուած իրավիճակը մասնագէտները համարում են մարտահրաւէր պետութեանը: Իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ են բազմաթիւ բարեփոխումներ առողջապահութեան, կենսաթոշակային եւ մի շարք այլ համակարգերում:

2-րդ համաշխարհային պատերազմից յետոյ ծնելիութիւնը Հայաստանում կտրուկ աճել էր: Այժմ 50-ականների սերունդը սկսում է մտնել կենսաթոշակային տարիք, ինչը նոր թափ է հաղորդում բնակչութեան ծերացման գործող միտումին:

Ըստ միջազգային չափանիշների, Հայաստանը պատկանում է բարձր ծերացման ցուցիչ ունեցող երկրների շարքին: Ըստ ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի հետազօտութեան, 2050 թուականին Հայաստանում ծերերի թիւը երկու անգամ կ՚աւելանայ, այսինքն ներկայիս 15.1 տոկոսի փոխարէն, ծերերի թիւը կը կազմի 30 տոկոս եւ աւելի:

«Սա պէտք է մեզ բոլորիս համար լինի լուրջ մտահոգութեան առարկայ, քանի որ 40 տարի անց Հայաստանում ամէն 3-րդը կը լինի 60 տարեկան եւ աւելի: Սա նշանակում է, որ պէտք է փոխուեն տնտեսական եւ սոցիալական ենթակառուցուածքները», - յայտնում է Հայաստանում ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետեանը:

ՄԱԿ-ի բնակաչութեան հիմնադրամը անդամ պետութիւններին փորձում է առաջարկել որոշակի սկզբունքներ, որպէսզի պետութիւնները կարողանան պատրաստել բնակչութեանը ծերացմանը՝ կատարելով բարեփոխումներ ու քայլեր, որոնց շնորհիւ ծեր մարդիկ դուրս չեն մնայ հասարակութիւնից:

«Մինչեւ այսօր Հայաստանի պետական ծրագրերը ուղղուած էին միայնակ տարեցների խնամքի ապահովմանը, որոնց թիւը Հայաստանում 14 հազար է», - յայտնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Ջեմա Բաղդասարեանը եւ աւելացնում, որ նախարարութիւնը բազմաթիւ ծրագրեր ունի տարեցների խնդիրները Հայաստանում լուծելու ուղղութեամբ, մասնաւորապէս նրանց զբաղուածութիւնը ապահովելու եւ առողջապահական ծառայութիւնները բարելաւելու ուղղութեամբ:

Հայաստանում այսօր միջին կենսաթոշակը կազմում է 31 հազար դրամ: Այս պահին տարեց մարդկանց զբաղուածութիւնը ապահովելու համար պետական մասշտաբային ծրագրեր չկան, ընդգրկուն չէ նաեւ տարեց մարդկանց կրթութեան պետական ծրագիրը:

Գարիկ Հայրապետեանը, այնուամենայնիւ, կարծում է, որ Հայաստանի կառավարութիւնը ճիշդ ուղու վրայ է, քանի որ սկսել է գիտակցել պետութեան առջեւ ծառացած մարտահրաւէրը:

# ՌՈՒԲԷՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԸ ԱՅԼԵՒՍ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՉԷ

Լրացաւ 15-օրեայ ժամկէտը, որի ընթացքում Ռուբէն Հայրապետեանը կարող էր ետ վերցնել Ազգային ժողովի պատգամաւորի մանդատից հրաժարուելու իր դիմումը: Նա դա չարեց, եւ հետեւաբար՝ դադարեց լինել խորհրդարանի պատգամաւոր:

Հանրապետական պատգամաւոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, գործարար Ռուբէն Հայրապետեանը դեռ անցած Յուլիսին էր յայտարարել, որ հրաժարւում է իր մանդատից՝ այն բանից յետոյ, երբ իրեն պատկանող «Հարսնաքար» ռեստորանային համալիրում դաժան ծեծի արդիւնքում մահացաւ երիտասարդ զինուորական բժիշկ Վահէ Աւետեանը:

Հայրապետեանի հրաժարականի մասին դիմումը խորհրդարանում ընթերցուել էր Սեպտեմբերին 5-ին:

## ԼՈՒՐԵՐ

### ԹՈՄԱՍ ԴԸ ՎԱԱԼ.- «ԱԴՐԲԵՋԱՆԸ ՉԻ ՅԱՆԴԳՆԻ ՅԱՐՁԱԿՈՒԵԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԴԱՆԱՒԵՐԻ ՎՐԱՅ»


Հարաւային Կովկասի հարցերի մասնագէտ Թոմաս Դե Վաալ

Ադրբեջանը միջազգային հանրութեան քննադատութիւնը չահելու ռիսկից՝ չի յանդգնի յարձակուել քաղաքացիական օդանաւերի վրայ: NEWS.am-ի թղթակցի հետ հարցազրոյցում ասել է Կարնեգիի ֆոնդի փորձագէտ, Հարաւային Կովկասի հարցերի մասնագէտ Թոմաս Դե Վաալը՝ մեկնաբանելով Ստեփանակերտի միջազգային օդանաւակային բացման մասին տեղեկատուութիւնը: «Ցաւոք, կարծում եմ շփման գծում լարուածութիւն կարելի է սպասել, քանի որ դա հայկական կողմի վրայ ճնշում գործադրելու Ադրբեջանի միակ գործիքն է»,- ասաց Դե Վաալը:

Նրա կարծիքով՝ Երեւանից Ստեփանակերտ չուերթներին այնուամենայնիւ կ՚իրականացուեն:

Աւելի վաղ NEWS.am-ը յայտնել էր, որ Ստեփանակերտի օդանաւակայանը սկսել է գործել Հոկտեմբերի 1-ից: Օդանաւակայանի գործարկման մասին յայտարարութիւնից յետոյ ադրբեջանական բազմաթիւ պաշտօնեաներ, այդ թւում՝ այդ երկրի Քաղաքացիական աւիացիայի վարչութեան ղեկավարը, յայտարարել են, որ իրաւունք են վերապահում ոչնչացնել Ստեփանակերտ թռչող ինքնաթիռները:

Յիշեցնենք, որ ԽՍՀՄ տարիներին Ստեփանակերտի օդանաւակայանը միջին եւ փոքր հեռաւորութեան չուերթներ էր ընդունում: Ղարաբաղեան պատերազմի ժամանակ օդանաւակայանն ամբողջութեամբ աւերուել էր: Նորակառոյց օդանաւակայանը կը սպասարկի Երեւան-Ստեփանակերտ-Երեւան չուերթը:

### ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՒՈՒՄ Է


վերակառուցուող պատմական շինութիւններէն մէկը

Թուրքիայի միակ հայկական գիւղը համարուող Վաքըֆլըի պատմական շինութիւնները վերակառուցելու աշխատանքներն արդէն սկսուել են, տեղեկացնում է Թուրքական «Ջիհան» գործակալութիւնը:

Սամարդաղի շրջանի ղեկավարութեան կողմից մշակուած «Զբօսաշրջութեան կառուցուածքի բարելաւմանն ուղղուած ծրագրի» շրջանակներում վերակառուցւում է պատմական շինութիւններից մէկը, որը վերածուելու է հիւրատան:

Աշխատանքների արդիւնքում վերաբացուելու է 4 սենեակներից բաղկացած հիւրատունը, ռեստորան եւ սրճարան:

Կառուցուող աշխատանքների մասին տեղեկութիւններ է տուել Սամանդաղի շրջանի ղեկավար Սուլէյման Օզչաքըրջըն, ով նշել է, թէ զբօսաշրջութեան խթանմանն ուղղուած այս ծրագիրը, հաւանաբար, կ՚աւարտուի երկու ամսից:

### ՕՍԿԱՆԵԱՆ ԶՐԿՈՒԵՑԱՒ

*Շարունակուած էջ 1-էն*

նուիրուած գումարները:

«Ես գող չեմ», - ի պատասխան գլխաւոր դատախազի հնչեցուցած մեղադրանքներուն ըսաւ նախկին նախարարը: Օսկանեան աւելցուց, թէ այս ընթացքին ինչ որ ըրած է, եղած է ի նպաստ իր հիմնած «Սիվիլիթաս» հիմնադրամի եւ եթէ եղած են խախտումներ, միտումնաւոր չան եղած:

Վիճայարոյց գումարները, ըստ Օսկանեանի, խորհրդակցելով «Սիվիլիթաս» հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդին հետ, վերջերս ամբողջութեամբ փոխանցուած են հիմնադրամի հաշիւներուն: «Այստեղից լումա պակաս չէ: Գնացէք, ստուգէք: Ինչի՞ս են պէտք Հանթսմանի փողերը»:

«Փողը կայ, բողոքը չկայ: Ի՞նչ ասեմ ես: Ես կարծում եմ, որ սա փոթորիկ է ոչ ինչ-որ բաժակի մէջ: Սա նոյնիսկ փոթորիկ չի մատնոցի մէջ», ըսաւ Օսկանեան:

Նախկին արտաքին գործոց նախարարը այս բոլորին մէջ քաղաքական դրդապատճառներ տեսնելով աւելցուց.- «Մարդ լինի, յօդուած կը գտնէք: Մեր երկրի խնդիրները թողած՝ 10 տարուայ արտաքին գործոց նախարարին դրել էք այստեղ, այսպիսի հարցադրումնե՞ր էք անում»:

Վարդան Օսկանեանը խորհրդարանի ամպիոնէն յայտարարեց, որ տեղի ունեցողը իր եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան դէմ ուղղուած քաղաքական պատուէր է. - «Հայաստանը պատրաստւում է Նախագահական ընտրութիւնների, եւ այս գործը ԲՀԿ-ի վրայ հնարաւորինս կոշտ ճնշում բանեցնելու փորձ է: Այս իշխանութիւնները քաղաքական ընդդիմախօսների հետ խօսում են պատանդի լեզուով»:

### ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ-. «ՍԱՖԱՐՈՎԻՆ ԱԶԱՏԵԼԸ՝ ԱՄՕԹԱԼԻ, ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՅԼ»

Երկուշաբթի, Հոկտեմբեր 1-ին ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի 67-րդ նստաշրջանի Ընդհանուր բանավէճի վերջին օրը ելոյթով հանդէս է եկել Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանը:

Նա նշել է, որ տարածաշրջանում էլ կայ անհանդուրժողականութիւն եւ ատելութեան խնդիր:

«Տարիներ շարունակ Հայաստանն այս ամբիոնից ահազանգում է Ադրբեջանում ռազմատենչ հռետորաբանութեան, միջազգային համաձայնութիւնների կոպիտ խախտումների եւ Ադրբեջանի հասարակութեան շրջանում ամենաբարձր մակարդակով իրականացուող հայատեացութեան քաղաքականութեան մասին», - ասել է Նալբանդեանը:

Նրա փոխանցմամբ, շատ միջազգային կառոյցներ նոյնպէս մտահոգութիւն են յայտնել Ադրբեջանում մարդու իրաւունքների ոտնահարման, օտարատեացութեան, հայերի հանդէպ ատելութեան, ռասիզմի եւ անհանդուրժողականութեան կապակցութեամբ:

Ո՞րն է Ադրբեջանի պատասխանը: Նախարարի խօսքերով, այդ երկիրը ոչ միայն անտեսում է միջազգային համայնքի ակնկալիքներն, այլեւ կատարում է քաղաքակիրթ աշխարհի արժէքները ոտնահարող նոր քայլեր: Դրա վկայութիւնը մարդասպան Սաֆարովին ազատ արձակելու եւ Ադրբեջանում հերոսացնելու իրողութիւնն է: Սաֆարովը Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դասընթացների ժամանակ կացնահարելով սպաննել է քնած Գուրգէն Մարգարեանին միայն այն բանի համար, որ նա հայ է: Ադրբեջանը Սաֆարովին հռչակել է ազգային հպարտութեան խորհրդանշան եւ օրինակ երիտասարդութեան համար: Աշխարհի արձագանքը միանշանակ էր՝ միջազգային համայնքը դատապարտել է Բաքուի այդ արարքը:

Նրա խօսքերով, Սաֆարովի սկանդալը լուրջ վնաս է հասցրել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացին:

Նախարարն իր ելոյթում ասել է, որ մինչ Հայաստանը փորձում է միջնորդների աջակցութեամբ գտնել կարգաւորման ճանապարհը, Ադրբեջանը շարունակում է ուժով սպառնալ, աւելի քան 20 անգամ աւելացնում է ռազմական բիւջէն, մերժում է միջնորդների առաջարկները, հրաժարւում է շփման գծից դուրս բերել նշանառուներին, խախտում է հրադադարի ռեժիմը ոչ միայն Ղարաբաղում, այլեւ հայ-ադրբեջանական սահմանին, Թուրքիայի հետ միասին շարունակում է Հայաստանի շրջափակումը:

Եւ այնուամենայնիւ, ըստ Էդուարդ Նալբանդեանի, Հայաստանը շարունակելու է հակամարտութիւնը բացառապէս խաղաղ եղանակով՝ ՄԱԿ-ի հռչակագրի հիման վրայ կարգաւորելու քաղաքականութիւնը:

### ՕՐԲԱՆ.- «ՍԱՖԱՐՈՎԻ ՅԱՆՁՆՈՒՄԸ ՃԻՇԴ ՈՐՈՇՈՒՄ ԷՐ»

Ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտայանձնումը «ճիշդ եւ իրաւացի» որոշում էր, որը թոյլ տուեց Հունգարիային դուրս գալ հայ - ադրբեջանական հակամարտութիւնից, յայտարարել է Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանը:

Հունգարական MTI լրատուական գործակալութեան փոխանցմամբ, խորհրդարանում պատասխանելով սոցիալիստ պատգամաւոր, Հունգարիայի նախկին արտգործնախարար Լասլօ Կովաչի հնչեցրած քննադատութեանը, որը շեշտել է, որ մարդասպանը իր հայրենիքում հերոսացուել է՝ ժամանելուն պէս ազատութիւն ստանալով, Օրբանը ասել է, թէ իր կառավարութեան որոշումը համապատասխանում է միջազգային իրաւունքին եւ Հունգարիայի իրաւական պրակտիկային:

«Մենք նոյնը կ՚անէինք, եթէ մի հայ սպաննած լինէր ադրբեջանցու: Հունգարիան պէտք է հետապնդի սեփական, այլ ոչ թէ Հայաստանի կամ Ադրբեջանի շահերը», - յայտարարել է Վիկտոր Օրբանը:

Կովաչը, իր հերթին, ընդգծել է, որ այդ քայլով Հունգարիան միջամտել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առկայ հակամարտութեանը: Շահը նման որոշումից, որը «Ռուսաստանին եւ Միացեալ Նահանգներին դրել է միեւնոյն կողմում», անհասկանալի է, յաւելել է նախկին արտգործնախարարը:

Խորհրդարանականը նշել է նաեւ, որ որոշմանը ընդդիմացել են Հունգարիայի արտաքին գործերի եւ արդարադատութեան նախարարութիւնները:

Վարչապետը հակադարձել է, թէ որոշման շարժառիթը «կարճաժամկէտ շահը չէր», իսկ երկարաժամկէտ հեռանկարում այն շահ բերելու է:

Նշելով, թէ հայ - ադրբեջանական հակամարտութիւնը դեռ շարունակուելու է, Օրբանը պնդել է, թէ «Հունգարիան դուրս եկաւ դրանից՝ արտայանձնելով ադրբեջանցի դատապարտեալին»: «Քանի դեռ նա այստեղ էր, նա բազմաթիւ հակասութիւնների եւ դժուարութիւնների պատճառ էր դառնում, եւ այդ իրավիճակը ապագայում էլ չէր փոխուելու», - յայտարարել է Հունգարիայի վարչապետը:

### ՀԱԽ-Ի ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՅԵԼՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

43-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ՚ընդգրկէ Կլէնտէյլ, Պըրպէնք եւ մօտակայ հայաշատ շրջանները, Դեմոկրատ՝ ՄԱՅՔ ԿԱԹՕ.

Նահանգային Խորհրդարանի 46-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ՚ընդգրկէ Վան Նայզ, Շըրմըն Օքս, Թոլուքա Լէյք Նորթ Հիլզ եւ մօտակայ այլ շրջաններ՝ Դեմոկրատ ԱՏՐԻՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

Հայ Ամերիկեան Խորհուրդը կոչ կ՚ընէ Նոյեմբեր 6-ին ներկայանալու քուէատուփ եւ նախագահական ընտրութիւններուն զուգահեռ քուէարկել վերոյիշեալ թեկնածուներուն:

# ԹՐՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿԸ ԲՆՈՒԹԱԳՐԷ

Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան՝ (ԱԶԿ) Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած հերթական համագումարին վարչապետ Ռեճէպ Թայիփ Էրտողանը հանդէս եկած է «Թուրք-իսլամական համադրմամբ ազգայնական յայտարարութիւններով«, ինչը «Թուրքահայերն ու Թուրքաբնակ ոչ մահմետականներն իրենց ուղղուած վիրաւորանք են գնահատում«: Այս մասին, ինչպէս հաղորդում է «Արմենփրէս»-ը, յայտարարել է, «Ակօս»-ի հայազգի խմբագրապետ Ռոպեր Քոփթաշը՝ Թուրքական «Թարաֆ» թերթի հետ զրոյցում:



Համագումարին ունեցած ելոյթին, նշելով, որ ինքը Թուրքիայի 75 միլիոն բնակչութեան կուսակցութիւնն է, Էրտողանն ասաց. «Կիպրոսի եւ Ղարաբաղի հարցերով նոյն կերպ կը շարունակենք փրոաքթիւ լուծում հարկադրող, խաղաղութիւն պարտադրող մեր սկզբունքային դիրքորոշումը: Դրա համար Հայաստանը, հայերը՝ անկախ ներսում թէ դրսում գտնուողները, պէտք է իմանան, որ մինչեւ չիրագործուեն մեր ազերի եղբայրների իրաւունքները, մենք որեւէ փոփոխութիւն չենք անելու Հայաստանի հետ յարաբերութիւններում»: Էրտողանը դրանով վերջակէտ դրեց Ապտուլլա Կիւլի մասնակցութեամբ ֆութպոլային դիւանագիտութեամբ սկսած եւ Ահմէտ Տաւուտօղլուի ստորագրած արձանագրութիւններով նախատեսուող Հայաստանի հետ յարաբերութիւնները բարելաւելու քաղաքականութեան,- վկայակոչելով վարչապետի խօսքերը՝ ասել է խմբագրապետը եւ աւելացրել. «այսպիսով, հակառակ մինչ այժմ եղած պնդումներին, նա Թուրք-հայկական յարաբերութիւնները կրկին պայմանաւորեց Ղարաբաղի հարցի լուծմամբ՝ Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու առաջ դնելով նման մեծ նախապայման»:

Ռոպէր Քոփթաշը ընդգծել է, որ Կիպրոսի խնդրում Էրտողանը չի մտածում դադարեցնել յարաբերութիւնները Յունաստանի հետ, մինչդեռ Ատրպէյճանի պատճառով նախընտրում է յարաբերութիւններ չունենալ Հայաստանի հետ: «Թուրքիայի վարչապետը երկակի չափանիշեր է կ'իրառում», -ասել է Քոփթաշը՝ աւելացնելով, որ Թուրքիայի վարչապետը Թուրքաբնակ հայերին չի ընդունում որպէս հաւասար քաղաքացիներ, իսկ նրա արած յայտարարութիւնն էլ ազգայնականներին է յիշեցնում:

# ԹՈՒՐՔԻՈՅ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ ՅԱՅՏՆԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Թուրքիոյ փոխվարչապետ Պեքիր Պոզտաղ պատասխանած է ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական (CHP) կուսակցութեան՝ Թունճելիէն ընտրուած պատգամաւոր Հուսէյն Այգունի՝ Թուրքիոյ մէջ գործող եկեղեցիներու քանակի հետ կապուած հարցին:

Թրքական Timeturk կայքի փոխանցմամբ՝ Թուրքիոյ փոխվարչապետ Պեքիր Պոզտաղ յայտներ է, որ Թուրքիոյ մէջ կը գործեն հրէական 38 սինակոկ, յոյներուն պատկանող 140 եկեղեցի, հայերուն՝ 52 եւ ասորիներուն՝ 58 եկեղեցի:

Պեքիր Պոզտաղ շեշտեր է, թէ Թուրքիոյ մէջ կայ գրանցուած ընդհանուր 349 եկեղեցի:

Նշենք, որ աւելի վաղ Պեքիր Պոզտաղ յայտնած էր, որ 2002 թ. իվեր Թուրքիոյ մէջ կրօնական արարողութիւններու անցկացման համար բացուեր է 10 եկեղեցի, իսկ նոյն ժամանակահատուածին վերանորոգուած է 68 եկեղեցի:

HayastanInfo.net

# ՏԻՆՔԻ ՀԱՐՑՈՎ ԷՐՏՈՂԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԸ ՊԱՀԱՆՋՈՒԻ

Հրանդ Տինքի սպանութեան հետ կապուած դատական նոր գործ սկսելու եւ արդար դատավարութիւն վարելու նպատակով, «Արդարութիւն կը պահանջենք» նախաձեռնութեան հեղինակն երը Թուրքիոյ վարչապետ Ռեճէպ Թայիփ Էրտողանէն հանդիպում մը պահանջած են. այս մասին կը հաղորդէ «Ակօս» թերթը:

Նախաձեռնութեան հեղինակներու շարքին են Թուրքիոյ մէջ յայտնի կարգ մը լրագրողներ եւ մտաւորականներ: Անոնցմէ մէկն է Օմեր Ֆարուք Կերկերիօղլուն, որ նշած է, թէ նախկին դատական գործընթացը հիասթափութիւն յառաջացուցած է շատերու մօտ, որովհետեւ ի յայտ չեն բերուած դատական գործի բոլոր մութ կողմերը, հակառակ Էրտողանի այն խոստումին, թէ «Տինքի դատական գործը պիտի չկորսուի Անգարայի մութ գործերուն մէջ»:

«Արդարութիւն կը պահանջենք» նախաձեռնութեան անդամն երը Յունիսին հանդիպում մը ունեցան նախագահ Ապտուլլա Կիւլի հետ. ընթացքին վերջինս խոստացաւ մօտէն հետեւիլ Տինքի սպանութէան ծալքերու բացայայտման եւ մեղաւորներուն համապատասխան պատիժ տալու ջանքերուն:

Յիշեցնենք, թէ Տինքի սպանութէան առնչակից դատավարութէան թղթածրարը միայն վերջերս ղրկուեցաւ վճռաբեկ ատեան, հակառակ անոր, որ Տինքի դատավարութեան վճիռը արձակուած էր այս տարուան Յունուար 17-ին:

# ԹՈՒՐՔԻԱՅԷՆ ՀԱԼԷՊ՝ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ



Թուրքիոյ եւ Սուրիոյ սահմաններուն վրայ Զօրաքշաբթի երեկոյեան արձանագրուեցան վտանգաւոր զարգացումներ, որոնք կրնան յաւելեալ լարուածութիւն ստեղծել շրջանին մէջ եւ նոյնիսկ առաջնորդել Թրքական քայլերու: Սուրիոյ սահմանային Թէլ Էլ Ապիատ շրջանին մէջ տեղի ունեցած վախումներու ընթացքին, ռումբ մը ինկաւ Թրքական հողերուն վրայ, սպաննելով առնուազն 5 Թուրքեր, քանի մը վիրաւորներու կողքին: Անքարա իսկոյն յայտարարեց, որ Թուրք քաղաքայիններու սպանութիւնը կը համարուի խիստ վտանգաւոր զարգացում:

Իսկ Հալէպի մէջ նոյն օրը տեղի ունեցան շարք մը պայթումներ, որոնք թիրախ ընտրեցին կեդրոնական Սաատալլա Ժապիրի հրապարակը, ուր նախապէս տեղի կ'ունենային վարչակարգին զօրակցող ցոյցեր: Պայթումներուն հետեւանքով սպաննուեցան առնուազն 40 անձեր, վիրաւորուեցան տասնեակներով ուրիշներ, ըստ «Ռոյթըրզ» գործակալութեան: Սուրիոյ մարդու իրաւանց խորհուրդին համաձայն, ականուած ինքնաշարժերով կատարուած պայթումները թիրախ ընտրած են զինուորական հաւաքավայրեր եւ սպաներու ակումբ մը: Աւելի ուշ, ականուած ինքնաշարժ մը պայթեցաւ նաեւ Ալ Ամիր հիւրանոցին մօտ: Պաշտօնական լրատուամիջոցները յարձակումներուն պատասխանատուն համարեցին զինեալ ահաբեկիչները: Հալէպի զանազան թաղամասերուն մէջ շարունակուեցան բախումները՝ ընդդիմադիր միաւորներու եւ կառավարական ուժերու միջեւ: Ընդդիմադիրները նաեւ յայտարարեցին որ հարուածած են ռազմական ուղղաթիռ մը՝ Դամասկոսի մօտակայ Ծոպար շրջանին մէջ:



# ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ԴԻԱՐԲԵՔԻՐՈՒՄ

*Հ. ԶԱՔԲԵԱՆ*

Միջոցառման մասին Սեպտեմբերի 25-ի համարում տեղեկացրել է «Ռադիկալը»: Նախքան տեղեկութեան մանրամասներին անդրադառնալը նշենք, որ Դիարբեքիրը քրտական շրջանակներում ունի Հիւսիսային Քրտստանի մայրաքաղաքի համարում, համապատասխանաբար թրքական շրջանակներն էլ Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրին համարում են PKK-ի ներկայացուցիչ:

Այլ կերպ, Բայդեմիրը որպէս թշնամական տարր է դիտարկւում Թուրքիայի քաղաքական շրջանակներում: Ինչ վերաբերում է Հայաստան-Թուրքիա կլոր սեղանին, թրքական թերթը միջոցառումը լուսաբանելիս նշելով հանդերձ «Թուրքիայի հետ Հայաստանի յարաբերութիւններում երկխօսութեան շրջանակն ընդլայնելու համար» Դիարբեքիր ժամանած մի խումբ հայ լրագրողների եւ գիտնականների մասին, մասնակիցներից տալիս է Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանի եւ աշխատակից Հայկակ Արշամեանի անունը միայն, մատնանշելով, որ միջոցառման աւարտին հայ մասնակիցներն այցելեցին քաղաքապետ Բայդեմիրին:

Ցամենայն դէպս, միջոցառմանը Նաւասարդեանը գրեթէ մահացած է համարել հայ-թրքական արձանագրութիւնները, առաջ է քաշել յարաբերութիւնների կարգաւորման համար այլ ուղիներ որոնելու անհրաժեշտութիւնը, ապա եւ աւելացրել է. «Այս միջոցառումը մեծ նշանակութիւն է ունենալու երկու երկրների յարաբերութիւնների բարելաւման առումով»: Նրան յաւելել է Արշամեանը, թէ ուրախ է Դիարբեքիր այցելելու համար եւ միջոցառումը նոր թափ կը հաղորդի Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններին:

Մինչդեռ այդ յարաբերութիւնները որպէս այդպիսին գոյութիւն չունեն, ոչ էլ կ'ունենան մօտ ապագայում, քանզի Թուրքիան չի հրաժարւում դրանց կարգաւորումը ղարաբաղեան հիմնահարցով պայմանաւորելուց, իսկ վարչապետ Էրդողանը շարունակում է յայտարարել, ինչպէս Սեպտեմբերի 11-ին յայտարարել էր Պաքւում. «Հայաստանի հետ սահմանի բացման խօսք անգամ լինել չի կարող, քանի դեռ չեն ձեռնարկուել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման կոնկրետ քայլեր»:

Պարզապէս այս կարգի միջոցառումները Հայաստան-Թուրքիա շփումների շարունակութեան պատրանք են ստեղծում, որպէսզի թրքական կողմը խուսափի հայ-թրքական արձանագրութիւնները ձախողելու պատասխանատւութիւնից:

Միջոցառման հայ մասնակիցներին ընդունելիս Դիարբեքիրի քաղաքապետ Բայդեմիրը Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններին անդրադառնալու փոխարէն նախընտրել է Դիարբեքիր հրաւիրել բոլոր հայերին, ընդգծելով, որ քաղաքի պարիսպների կառուցման համար թուրքերի, քրտերի, ասորիների եւ քաղդեացիների հետ քրտինք են թափել նաեւ հայերը:

Այնուհետեւ նա աւելացրել է. «Ես դիարբեքիրցի քուրդ եմ: Հայերը, ասորիները կամ քաղդեացիներն այս քաղաքում ապրելու այնքան իրաւունք ունեն, որքան ես: Ծագումով դիարբեքիրցի բոլոր համաքաղաքացիներիս տուն եմ հրաւիրում: Վերադարձէ՛ք հայրենի օճախ: Մենք մերժում ենք կոտորածների եւ խոշտանգումների մասնակից մեր պապերի ժառանգութիւնն ու դատապարտում նրանց անխղճութիւնը: Կարծում եմ, թուրքերի, քրտերի, հայերի, արաբների եւ ասորիների համագոյակցութեան համար անհրաժեշտ է սկզբնաւորել ծաւալուն երկխօսութիւն: Արտասահման մեկնելն ինձ օրէնքով արգելուած է: Այլապէս կ'ուզենայի լինել Երեւանում: Կ'ուզենայի Դիարբեքիրից մի փունջ ծաղիկ դնել Եղեռնի յուշարձանին: Ցանկանում եմ տեղեկացնել, որ նոր սերունդը մերժում է անցեալի անարդարութիւնը: Իմ մեծ երազանքը Թուրքիայում հայ, թուրք, ասորի եւ ճնշուած բոլոր ժողովուրդներին նուիրուած ընդհանուր յուշարձանի կառուցումն է»:

# ՍԹԻՖԸՆ ՀԱՐՓԸՐԻ ԳԱՆԱՏԱՆ

*ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ*

Անցեալ շաբաթ, Սթիֆըն Հարփըրի կառավարութիւնը, իր արտաքին գործոց նախարարի բերնով յայտարարեց թէ՝ Գանատան եւ Անգլիան աշխարհի կարգ մը երկիրներու մէջ կողք-կողքի նոյն դեսպանատան յարկին տակ պիտի գործեն (Share Space), որպէսզի ծախսերը պակսեցնեն (Cut Costs) եւ խնայողութիւն կատարեն: Սակայն, խնայողութիւն ընելու մակերեսային պատրուակին տակ, Սթիֆըն Հարփըր կը փորձէ առաջ քշել իր անգլիասիրութիւնը, շատ լաւ գիտնալով թէ Գանատացի ժողովուրդի մեծամասնութեան զգացումներուն դէմ է Գանատա-Անգլիա մէկ դեսպանատան մէջ աշխատակցելու գաղափարը: 2006 թուականին, վարչապետ դառնալէն քանի մը ամիս ետք, իր Անգլիա կատարած այցելութեան ընթացքին եւ Գանատա-Անգլիա Առեւտրական Սենեակի (UK-Canada Chamber of Commerce) առջեւ իր խօսած ելոյթին մէջ, Հարփըր՝ ինքզինք ներկայացնելէ ետք որպէս զաւակը Անգլիացի ընտանիքի մը որուն նախնիքը 1600-ական թուականներուն գաղթած էին Գանատա Անգլիոյ հիւսիսէն, կ'ըսէր հետեւեալը, «Գիտեմ որ արդիական (unfashionable) չէ խօսիլ գաղութատիրութեան (Colonialism) մասին որեւէ ձեւով որ ժխտական չթուիր ..... սակայն գանատական առումով, Բրիտանական կայսրութեան արարքները մեծ մասամբ հեշտ ու անվնաս (Benign) էին, երբեմն ալ փայլուն»: Նախապէս եւ անցեալ տարի, Հարփըրի դահլիճը հրահանգած էր Գանատայի դեսպանատուներուն որ թագուհիի նկարին աւելի աչքառու եւ տիրական ներկայութիւն տրուի, եւ վերահաստատած էր արքայական (Royal) բառի գործածութիւնը Գանատական նաւային (Canadian Navy) եւ օդային ուժերու (Canadian Air Force) անուններուն վրայ աւելցնելով այդ բառը: Սթիֆըն Հարփըր կ'ուզէ դեռեւս զոհացնել իրեն նման պահպանողականները որոնք կը մերժեն վերջնականապէս խզուիլ կամ դուրս գալ Անգլիոյ հոգատարու-

Շար.ը էջ 19



# ԴԻԼԻՋԱՆ ՆԱԽԱՁԵՌՆԵՑ ԻՐ ԵՕԹԵՐՈՐԴ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻՆ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

«Լարք Երաժշտական Ընկերակցութեան» «Դիլիջան» Սենեկային Երաժշտութեան եղանակային եօթերորդ համերգաշարի առաջին ելոյթը տեղի ունեցաւ 30 Սեպտեմբեր 2012, կ.վ. ժամի 3-ին, Colburn Դպրոցի Zipper հանդիսասրահին մէջ, Լոս Անճելըս:

Սրահով մէկ լեցուն՝ հայ թէ օտար գեղարուեստասէր հանդիսատեսներու դէմքին՝ արտայայտութիւն կը գտնէր խորը ուրախութիւն՝ տեսնելով «Դիլիջան»ը, որ յարաբերաբար դարմանելով իր գոյութեան սպառնացող վերջին քանի մը տարիներու նիւթական տագնապները, կը շարունակէ բարձրօրէն գնահատուած արուեստի առաքելութիւնը, որուն արձագանգած են երաժշտական արուեստի հանրածանօթ քննադատներ:

Անոնց շարքին են՝ Mark Swed, որ կը գրէր Los Angeles Times-ի մէջ իր խօսքը մասնաւորելով «Դիլիջան» Սենեկային Երաժշտութեան. «Մեծ երեւոյթ է տեղի ունեցող այս Սենեկային Երաժշտութիւնը»: Alain Swed, իր հերթին պիտի ըսէր. «Այս քաղաքի մէջ, շատ երկար ժամանակ է մը ի վեր, աւելի գեղեցիկ Սենեկային Երաժշտական կատարողութիւն չեմ յիշեր»: Իսկ Jim Eninger պիտի հաստատէր Սենեկային Երաժշտութեան Լրատու Թերթին մէջ. «Ամէն դէպքին, «Դիլիջան» Սենեկային Երաժշտական կատարողութիւնները շարքին կը դասուին այն գեղեցկագոյն համոյթներուն, զորս Հարաւային Քալիֆորնիան կը հրամցնէ»:

«Դիլիջան»ի Սենեկային Երաժշտութեան եղանակային եօթերորդ համերգաշարը, նուիրուած է հայազգի անմահանուն երգահան՝ Արամ Խաչատուրեանի Ծննդեան 110-Ամեակին, կու գար շարունակելու Լարք Ընկերակցութեան «Դիլիջան» Սենեկային Երաժշտութեան, հայ թէ օտար ժողովուրդներու հանճարները մեր համայնքներուն ծանօթացնելու գնահատելի աւանդոյթը:

30 Սեպտեմբերի «Դիլիջան»ի առաջին համոյթը կ'ընդգրկէր հայ թէ օտար հանճարեղ երգահաններ, որոնց գործերը կը մեկնաբանէին նոյնպէս հայ եւ օտար տաղանդաշատ երաժիշտ-երաժշտուհիներ:

Յայտագրի վրայ կը գտնուէր Camille Saint-Saens )1862-1918(-ի Fantaisie in A, որ յօրինուած էր ջութակի եւ քնարի համար: Ջութակը՝ առաջին մասով քաղցրահնչիւն (melodia), երկրորդ մասով, շատ յաճախ յարձակողական, իսկ անոր ուղեկցող քնարը, մերթ հոգեյոյզ, մերթ կտրատուող քնարային համադրութիւնը՝ ապրումի պահեր հրամցուցին հանդիսատեսնե-

Շար.ը էջ 19

# ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀԻՒԼԱԼԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՒ Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

## 100,000 ՏՈԼԱՐ ՆՈՒԷՐ Ս. ՂԵՒՈՆԴ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ



Կիրակի, Սեպտեմբերի 30ին, 2012, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, օրուան պատարագիչ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Հայրապետական կոնդակով եւ Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով պարգեւատրեց Տիար Յարութիւն Հիւլալեանը: Նոյն պահուն Տիկին Լենա Հիւլալեան ստացաւ Ս. Էջմիածնի զարդակոճակը: Պր. Յ. Հիւլալեան այս մեծ պատիւին կ'արժանանար առ ի գնահատութիւն տասնեակ տարիներու իր եկեղեցանուէր եւ դպրոցանուէր անխոնջ ծառայութեան եւ նուիրումին համար: Ինք եղած է թէ ծխական խորհուրդի գործունեայ անդամ եւ թէ Ա. եւ Մ. Յովսէփեան Վարժարանի Հոգաբարձութեան ատենապետ: Արդարեւ, իր օրով դպրոցի մակարդակն առաւել եւս բարձրացաւ եւ ունեցաւ պարտէզէ զերծ հաւասարակշռուած պիւտճէ մը:

Եկեղեցական արարողութեան աւարտին՝ յարակից Կիրակոս սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ: Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը, հանդիսավարութեամբ Տիար Ռաֆֆի Քէնտիրճեանի: Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին արուեստագէտ Գէորգ Ջանկիլեան եւ Յովսէփեան վարժարանի աշակերտները, որոնք իրենց նուագով, երգով, պարով ու աս-

Շար.ը էջ 18

# ԼԱՐՔԻ «ԹԱԳՈՒՀԻ» ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ



**ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ**

Երեխաները մեր վաղուայ օրն են, մեր ապագան եւ պէտք է գուրգուրանք նրանց համար:

Այս ազնիւ նպատակով 8 տարի առաջ «Լարք» հաստատութեան ներքոյ ստեղծուել է «Թագուհի» ամառային ճամբարը, որը դարձել է փոքրիկ «Հայաստան», որտեղ Մեսրոպեան հանճարեղ հայերէնով անվերջ թեւածում է հայ երգն ու բանաստեղծութիւնը, Կոմիտասեան շունչն ու ոգին:

Մանկութեան աշխարհը հոգեբանների եւ ոչ միայն հոգեբանների համար մեծագոյն առեղծուածն է՝ անարատ եւ գրաւիչ, մաքուր առեղծուածների երեւոյթ:

Ի՞նչն է աւելի ջինջ մանկան լուսէ արցունքից, աւելի անուշ, քան նրա մարմնի կաթնահամ, աւելի առինքնող, քան նրա անմեղ հարցասիրութիւնը: Եւ այդ հրաշք, թանկագին մանկիկներին բազմաթիւ ծնողներ 8րդ տարին լինելով վստահում են Լարքի «Թագուհի» ամառային ճամբարին, որտեղ իւրաքանչիւր Ուրբաթ կազմակերպուող հանդէսներում հնչող մանուկների երգն ու խօսքը, պարն ու ստեղծագործ մտքի աշխատանքները վկայում են այն հսկայական, շօշափելի աշխատանքի մասին, որ կատարւում է այստեղ հմուտ եւ նուիրեալ մանկավարժների կողմից:

Վաղ առաւօտեան ժամը 7:30ից մինչեւ 8ը, մենք սիրով եւ ուրախութեամբ ընդունում ենք մանկիկներին՝ ժիր, կայտառ, ծիծաղկոտ, խոհուն, երազկոտ, լուռ, երբեմն թախծոտ աչքերով: Ասմունքի, երգի, նկարչութեան, ձեռքի աշխատանքի, թատրոնի, պարի, ճատրակի դասարաններում երեխաները հաղորդակցւում են արուեստի տարբեր ճիւղերի հետ, հարստացնելով նրանց ներաշխարհը, զարգացնելով մանկիկների մտահորիզոնը, ճաշակը, ճանաչողական հետաքրքրութիւնը, երեւակայութիւնը:

Պ. Սեւակի, Համօ Սահեանի, Կապուտիկեանի, Աւետիք Իսահակեանի, Շիրազի բանաստեղծութիւնների, Ստ. Լուսիկեանի, Կոմիտասի, Տիգրան Մանսուրեանի երգերի, Սարեանի, Մինասի գոյների միջոցով մեր ցանկութիւնն է կերտել նրանց հայեցի եւ ազնիւ նկարագիրը:

Եւ այս ամէնը կատարում ենք սիրով, համբերութեամբ եւ նուիրումով:

*Գալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան Մամուլով կամ հեռուստատեսութեամբ ոչ ոք չի արձագանգել NEWS.am լրատուական կայքէջում հրապարակուած ներքոյիշեալ հաղորդագրութեանը: Հայոց աշխարհի նախագահը, Գիւմրի-Լենինական քաղաքում, խորհրդարանական ընտրութիւնների իր քարոզարշաւի ելոյթում, անդրադարձել է նաեւ միջհամայնքային յարաբերութիւններին, որ Հայաստանցի-Ղարաբաղցի, Երեւանցի-«Ախպար» հակադրութիւնները նեղմտութիւններ են, փոքր մտաւոր հորիզոնի արգասիքը: Սակայն «ախպարն» ո՞վ է, նրանք ի՞նչ ցեղի-ազգի մարդիկ են: Նա չէ՞ր իմանում, որ նրանք վաթսուն եւ աւելի տարիներ առաջ իրենց նախնիների երկիր վերադարձած, հայրենադարձ, Հայկ Նահապետի զարմից Արայորդի-արեւորդի արարչական Արմէն-Հայեր էին: Եթէ հայերէն կարդալ իմացող օտարազգի մի անհատ այն ընթերցէր, երեւի խիստ զարմացած կը լինէր, թէ Հայաստան-Երեւանում այդ ի՞նչ ցեղի մարդիկ են բնակւում: Հայաստանը արարչագործ երկիր է, Աստուած այնտեղ է արարել առաջին մարդը եւ այնուհետեւ ազգեր բազում: Հապա՛, Հայաստանի նախագահը նրանից ի՞նչ պակաս էր, որ ինքն էլ իր թագաւորած երկրում նոր ցեղի մարդիկ՝ «Ախպար»-ներ արարած չլինէր: Արդեօք անխոհեմութիւն-անհեթեթութիւն, չէ՞ր այդ «հայրենադարձ» արորդի Արմէն-Հայերին կոչել իր երկրում նուաստացուցիչ դարձած ածականով: Ազգին փոխանակ համախմբման յորդոր անելու, խօսում է հակադրութիւնների մասին: Այո, իսկապէս Հակադրութիւն, ատելութիւն առաջացել է հայաստանցիների ու ղարաբաղցիների միջեւ, որովհետեւ ինք եւ իր նախորդը ինչքան ոչ արհեստավարժ պաշտօնեայ կար իրենց լեռնաշխարհում բերին լցրին Երեւան, որ զօրավիգ լինէին իրենց: Իսկ Երեւանցին հակադրուեց հայրենադարձներին՝ նրանց աշխատասիրութեան, պարկեշտութեան, ազնւութեան, ջանասիրութեան, նուրբ կենցաղի եւ տնտեսական առօրեայ կեանքի համարեայ բոլոր բնագաւառներում տիրող դիրք գրաւած լինելու համար:*

*Ես, որպէս քաջ մարդկանց, Մուսաների պաշտամունքով սրբացած՝ հայացած լեռների ծնունդ, հայրենապաշտ արեւորդի Արմէն-Հայ, պաշտամունք ունեմ Հայկական Սրբազան Լեռնաշխարհին, Արարատին, որն ապացուցել եմ իմ երկնած հայաշունչ հատորներով: Իմ համար խորհրդանիշ է ոգեղէն խորհուրդով պանծացած հայոց անկախացած երկրի նախագահական պալատը, նրա «գահին» բազմած նախագահը, վարդ ծաղիկ հագած կառավարական տունը, նրա գլխին արեւից փրփրացող դրօշակը, խորհրդարանը, իսկ Հայաստանը Աստուածացած է իմ հոգում: Դուն, հայոց նախագահ, ինչո՞ւ երկիր վերադարձած հարիւր հազարներին «ուրիշ» համարեցիր, ինչո՞ւ նրանց որակեցիր երկրում արմատացած անարգական մակդիրով, ինչո՞ւ հաւասարուեցիր քու նշած նեղմիտ մարդկանց . . . :*

*Հայաստանի նախագահի կողմից այդ ի՜նչ հատուածականութիւն, այլամերժութիւն, խտրականութիւն հայրենիք վերադարձած հազար-հազար հայերի նկատմամբ, որոնք հիմա իր նախագահած երկրում արդէն «թանգարանային» նմուշ են դարձել: Դեռ շուտ փախել են իրենց հայրենի հողից, իրենց պատած տներից, վաճառել այն եւ նրանց ամբողջ հասոյթը նամակի ծրարների մէջ դրած տարել տուել երկրից դուրս մեկնելու արտօնագիր շնորհող, Ներքին Գործերի Նախարարութեան (ՕՎԻՐ) կոչուած բաժանմունքի, ամբարիշտ, ստոր պաշտօնեաներին: Հողի կարօտի հուրն իրենց սրտերում հասել են ուր որ պատահէր, ուր որ հնարաւոր էր: Մեծն Աւետիքի թոռ Աւիկը, սոյն թուականի Սեպտեմբեր ամսի «Նոր Կեանք» լրագրի 41, 42 թիւերում հրատարակուած յօդուածաշարքում յայտարարել, որ «հիմա նրանցից Երեւանում համարեայ ոչ ոք չի մնացել», էլ ի՜նչ հակադրութիւն: Փնտրեցէ՛ք, գտէ՛ք այդ յօդուածաշարքը, տեսէք ինչպիսի՜ սիրով, Մեծ Հայր Աւետիքից ժառանգած բանաստեղծական պաթոսի կարմիր կրակ սիրով, Հայկի զարմից Արմէն-Հային վայել հոգեզմայլ սիրով նկարագրում իր ցեղակից, ազգակից այդ հայրենադարձ Արմէն-հայերի կենցաղը, երկրին նուիրումը, առօրեայ կեանքի համարեայ բոլոր բնագաւառներում նրանց անհասանելի արհեստավարժութիւնը, իր Մեծ Հայրիկի օճախի հետ մտերմիկ յարաբերութիւնները, նրանց «Պոլսահայ անուշ Հայերէնը, Արեւմտահայերէնը»: Այն ընթերցելուց յետոյ, նրանց «Եղբայր» պիտի յորջորջէք, պիտի սիրէք նրանց խօսած անուշ Հայերէնը, Հայոց Սրբազան Լեռնաշխարհի արեւմտեան կողմն արեւորդի արմէնների Հայերէնը:*

*Դեռ մինչեւ հիմա էլ Հայաստանցի բնիկ հայը չհասկացա՞ւ, որ հազար-հազար հայեր իրենց էլ պատկանող նախնիների երկիր վերադարձան՝ եւ ոչ թէ ներգաղթեցին: Մեծ եղեռնից առաջին ու երկրորդ սերնդի արորդիներն էին նրանք, որոնք խաղի բերելով դուշմանին կամ մարտում նրան սպանելով կարողացել էին ողջ մնալ, ապաստան որոնել արեւելք-արեւմուտքի ասպնջական օտար երկրներում: Նախնիների արարելու, գոյատեւելու իրենց հին աստուածների ոգու հուրը իրենց սրտերում, ծիծեռնակների նման նոր բոյներ հիւսեցին, գերդաստանի զարմի յարատեւման համար այրիներ նորէն ամուսնացան, որբուկները մեծացան, իրար հետ ամուսնացան, տղաներ ու աղջիկներ շատ-շատ, որոնց մեծ հայրերը ու մեծ մայրերը կանչեցին իրենց նահատակուած հարազատների անուններով: Իրենց շէների, իրենց պայթող աղբիւրների ջրերի, իրենց հողի, իրենց հանդերի, իրենց պարտէզների կարօտի թախիծի մորմոքը սրտերում ուրախ լուրեր եկան հայրենիքից: Ար-Արա, արեւ աստծոյ արեւորդի հայերը երկիր պիտի վերադառնային միայն հայրենի հողի կարօտով, միայն Արարատի լոյսով արբենալու եւ ուրիշ ոչինչ:*


NEWS.am
THE SHORTEST WAY TO KNOW

Սերժ Սարգսյան. հայաստանցի-ղարաբաղցի, երևանցի-ախպար հակադրությունները նեղմտություններ են

Ապրիլ 29, 2012 | 22:33

Հայաստանցի-ղարաբաղցի, երևանցի-ախպար հակադրությունները նեղմտություններ են, փոքր մտավոր հորիզոնի արգասիք: Այդ մասին ասաց Հայաստանի նախագահ, ՀՀԿ առաջնորդ Սերժ Սարգսյանը՝ Գյումրիում ընտրողների հետ հանդիպման ժամանակ:

*Արամ հայոց նահապետ, դէպի արեւելք իր արշաւանքի ժամանակ քաղաք էր հիմնադրել, բնակեցրել շրջապատի մարդկանցով, մեհեանի քրմապետի անունով այն «Մաժակ» կոչել, պարտադրել քաղաքի բնակչութեանը միայն «Հայերէն» խօսել, պատուիրել կտրել զանցառուների լեզուները: Այդ քաղաքը յետագայում Կեսարիա պիտի կոչուէր: Հեռու-հեռու արեւելքի տափաստաններից խաչնառած ցեղի մարդիկ խուժեցին Հայոց Սրբազան Լեռնաշխարհ, քանդեցին, փլեցին, տիրեցին: Որպէսզի բնօրրանի մարդկանց հոգիներում մեռնէր ցեղի զարմի ոգին, պարտադրեցին իրենց լեզուն խօսել, սպառնացել հատել նրանց լեզուները: Այդպէս էր, որ նրանք մասամբ թրքախօս էին դարձել:*

*Հայրենիք վերադարձած հայերը, իրենց նախկին սովորութեան համաձայն, իրարու դիմել էին մտերմական «Ախպար» գաւառական բառի, յարգալից իմաստով, ինչպէս բնիկ հայերն էին իրար դիմում «եղբայր-ախպեր» կանչով, ինչպէս Մեծն Աւետիքը իր «Որսկան Ախպեր» բանաստեղծական տաղի լեզուով: Կենցաղային տարբերութիւնները, այլամերժութիւնը, ատելավառ նախանձը, զարմի տեսակի հանդէպ ոչ սիրալիր վերաբերմունք տածող արորդի Հայը նրանց իրարու «ախպար» դիմելու ջերմ, սիրալիր արտայայտութիւնը վերածեց արհամարհական դիմելու ձեւի ածականով, նրանց ճոխ ու անուշ Արեւմտահայերէնն էլ՝ «Ախպարերէն»: Ստեղծեցին նոր ազգ ու լեզուատեսակ, ամօթ:*

*1945 թուական, Լիբանան-Պէյրութ, Սահակեան դպրոցի մարզադաշտից սկսեց նրանց ոդիսականը: Բանախօսում էին Հայաստանի Գրողների Միութեան համագումարից վերադարձած բանաստեղծ՝ Վահէ Վահեանը (Սարգիս Ապտալեան) եւ Լիբանանի «Առաջադիմական» կոչուած շարժման պարագլուխներ: Սուտ խօսեցին, դրուատեցին Հայաստանում տիրող կացութիւնը, չասացին ճշմարտութիւնը, խաբեցին հազար-հազար հայերին: Այս տողերի հեղինակն էլ ներկայ էր հաւաքին: Իմ ուսանած հաստատութիւնում Հայոց լեզու ու գրականութիւն դասաւանդող բանաստեղծը եթէ ողջ լինէր «Ամօթ» պիտի կանչէր նրան: Այդ առաջադէմ հոսանքի «խոշոր եղջիւրաւոր» պարագլուխներից եւ յայտնի մարդկանցից ոչ ոք նաւեր չբարձրացան: Հայրենի երկրում տիրող վիճակին լրիւ տեղեակ չլինելով հանդերձ ընդդիմադիր կուսակցութիւնը դէմ էր ներգաղթին: Նաեւ հին «հաշիւներ» ունէին Սովետ Միութեան հետ: Այո, ապաժամ էր Հայաստան վերադարձը, թէեւ քաղաքական, ազգային հիմնահարցեր, դրդապատճառներ կային:*

*Այնուամենայնիւ, եթէ այդ ժամանակ պատեհ էր համարուել հայրենիք վերադարձը կազմակերպել, այն իրականացնէին իմաստուն խոհեմութեամբ: Կշռադատէին այնտեղ տիրող կացութիւնը, այնտեղ տիրող սոցիալական կարգերը, այդ երկրի կործանիչ պատերազմի հետեւանքով աւերուած տնտեսական համակարգը: Պարտաւոր էին Հազար-հազարների կեանքի, նոր պայմաններում նրանց գոյատեւելու հանդէպ ազգային, մարդասիրական զգացումի խղճմտանք ցուցաբերէին: Նպատակայարմար չէ՞ր այդ ատեն միայն միջին, առաւելապէս նրանից ցածր, աղքատ, գործազուրկ դասի հայրենազուրկ հայերի ներգաղթը իրականացնել, որոնց բացարձակ մեծամասնութիւնը ծախելու, կորցնելու ոչինչ ունէին: Ինչո՞ւ էին Քէսապի շէների հողից արմատախիլ անում հազար-հազար տարիների արորդիներին, որ նրանց հայացած հողին տիրանային այլազգի մարդիկ, փոխուէր տեղի ժողովրդավարական դէմքը: Ինչո՞ւ էին Լիբանանում արդէն համախումբ բնաւորուած քաջազուն Մուսալեռցիներին նորէն տեղահան անէին, նրանց յատկացուած տներին ու հողակտորներին տիրանալ փորձէին Պաղեստինցի գաղթականները: Միայն իրենց քաջին վայել համարձակութեան շնորհիւ, ծեծելով վռնտեցին նրանց, որոնք սկսել էին տիրել մեկնողների բնակարաններին, հողաբաժին պահանջել, օրը ցերեկով մզկիթ կառուցել, որը լեռնականները գիշերը հիմնայատակ էին անում:*

*Անարգ մարդիկ, լուռ նայում էին թէ ինչպէս որոշ ձեռնարկատէրեր իրենց արտադրական սարքաւորումները, բեռնատար ինքնաշարժերը բարձում նաւերին: Լաօ, հայերէնի երկիր ենք վերադառնում, գնում հայրենիքի վերաշինութեանը մասնակցելու, կանչում էին նրանք: Այդ խոշոր եղջիւրաւորներից ոչ ոք, թէկուզ շշնջիւնով չասեց նրանց, որ այնտեղ դրամատիրական հասարակարգ չի տիրում, հայրենիքում գործում են Սոցիալիստական կարգերին յարիր արտադրական յարաբերութիւններ, տնտեսութիւնը համայնական է, այնտեղ ազատ տնտեսական գործունէութիւն չի թոյլատրւում իրականացնել, Հայաստանը Համայնավարական Ռուսի պոչից է բռնած:*

*Նաւերից իջան, Սովետական հող էր, մնաք բարով հիւրընկալ երկրներին, որտեղ շատեր նրանց ասած պիտի լինէին՝ Եկել էք մնացէք, մի գնաք: Լցրին բեռնատար*

*Շար.ը էջ 19*

MISSION
WINE & SPIRITS
Over 30 Years of Unbeatable Prices!

# ՓԱՍԱՏԻՆԱ, ԿԼԵՆՏԷՅԼ, ՍԱՆ ՖԵՐՆԱՆՏՕ ՎԵԼԻ, ԴԱՐՁԵԱԼ ԿԼԵՆՏԷՅԼ

**Նորագոյն Կլենտէյլի մասնաճիւղը շուտով կը բանայ իր դռները Maple եւ Glendale պողոտաներու խաչմերուկին**

***Աչքը լոյս, Կլենտէյլի մեր բարեկամներուն***

**ՁԵՐ ՄՕՏ ԿՈՒ ԳԱՆՔ – ՁԵԶՄՈՎ ՀՊԱՐՏ ՈՒ ԵՐՋԱՆԻԿ**

**708 S. Glendale Ave.,**
**(818) 649-1090**

# ՀԱՅ ԳՐԱՒՈՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

*ԱՐԱՄ ԲԱԲԱՅԵԱՆ*

*Այս տարի լրանում է հայ տպագրութեան ուղիղ 500 ամեակը: 1512 թւականին, հեռաւոր Վենետիկ քաղաքում, լոյս տեսաւ հայերէն առաջին տպագիր գիրքը, որը կոչւում է «Պարզատումար»: Օրացուցային տիպի ժողովրդական մի գիրք է այդ: Գրքի տպագրիչը Յակոբ Մեղապարտն էր, առաջին հայ տպագրիչը: Այդքան վաղ ժամանակներում, Գուտենբերգի գիւտից մօտ 55-60 տարի յետոյ, հայերէն տպագիր խօսքի երեւան գալը խոշոր երեւոյթ էր հայ կուլտուրայի պատմութեան մէջ: Դրանով սկիզբ դրւեց Հայ ժողովրդի կուլտուրական կեանքի նոր դարաշրջանին:*

*Գիտենք, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ տառապել է օտարի լծի տակ: Սակայն, առանձնապէս շատ ծանր է եղել նրա վիճակը վերջին հինգ դարերում՝ Թուրքիայի եւ Իրանի տիրապետութեան օրօք: Արեւելքի յետամնաց, աւատական այդ երկիրները ոչ միայն ժողովրդի կեանքի ապահովութեան համար նւազագոյն պայմաններ չէին տալիս, որի հետեւանքով եւ շարունակւում էր հնուց արդէն սովորութիւն դարձած նրա արտագաղթը երկրից դէպի օտար հորիզոններ, այլեւ հնարաւորութիւն չէին ստեղծում մշակութային-լուսաւորական որեւէ աշխատանքի, այդ թւում եւ տպագրութեան: Այս պարագաներում հայ*

*ժողովրդից առանձին խմբեր թողնում էին հայրենի հողը եւ օտար երկիրներում էին փնտռում նպաստաւոր պայմաններ՝ լուսաւորական աշխատանքներ կատարելու համար:*

*Հեռաւոր վայրերում նրանք հիմնում էին տպարաններ, ստեղծում էին տպագիր գրականութիւն եւ այդ հեռաւոր կուլտուրայի օջախներից ջանք չէին խնայում իրենց ուժերը նւիրելու հարազատ ժողովրդի մշակութային-լուսաւորական գործին: Այս տեսակէտից պատահական չէ, որ առաջին հայերէն տպագիր գիրքը լոյս ընծայւեց Վենետիկում եւ ոչ թէ Հայրենի հողում:*

*Միայն XVIII դարի վերջին քառորդում, հայերէն գրքի առաջին տպագրութիւնից մօտ 260 տարի յետոյ, մեծ դժւարութեամբ հնարաւոր եղաւ կազմակերպել Էջմիածնում տպարան (1771 թ.) եւ նրան կից թղթի գործարան: Դրանով էլ սկսւեց տպագրական եւ հրատարակչական գործունէութիւն հայրենի հողում՝ Հայաստանում: Սակայն պէտք է ասել, որ մինչեւ սովետական կարգերի հաստատումը մեզ մօտ, տպագրութեան գործում առաջատարը շարունակեցին մնալ օտար երկրներում եղած հայ տպագրութեան օջախները:*

*Թէ ինչ աստիճանի է հայ ժողովուրդը սիրել գիրքը եւ ընդհանրապէս տպագրութեան մշակոյթը, ցոյց է տալիս այն ակնառու փաստը, որ դեռեւս XVII դ. առաջին կէսին, 1640 թւականին, Ֆէոդալական Իրանի հեռաւոր անկիւններից մեկնում է Սպահանի մօտ գտնւող Նոր Ջուղա գիւղաքաղաքում հայերը առանց տպարան տեսնելու, եւ միայն հեռաւոր պատկերացում ունենալով տպագրութեան մասին, հիմնում են տպարան, որի մամուլը, տառերի փորագրումն ու ձուլումը, անգամ տպագրական թուղթը պատրաստում են իրենք՝ տնայնագործական եղանակով: Սկսւում է բաւականին եռանդուն տպագրական հրատարակչական գործունէութիւն: Առաջինը, որ այդ տպարանում լոյս է տեսել, մեծածաւալ «Հարանց վարք» անունով գիրքն է (1641թ.), յետոյ «Խորհրդատետր»(1641 թ.) ապա՝ «Ատենի ժամագիրք»(1642 թ.): Փորձ են անում առաջին անգամ տպագրելու նաեւ հայերէն «Աստւածաշունչը»:*

*Նոր Ջուղայի տպարանը, ինչպէս եւ այնտեղ տպագրւած գրքերը եղել են ոչ միայն Իրանում, այլեւ ամբողջ Մերձաւոր Արեւելքում առաջին տպարանն ու առաջին տպագիր գրքերը:*

*Շատ ուրիշ առաջաւոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը իրաւունք ունի հպարտանալու իր հարուստ գրականութեամբ: Ուղիղ չորս եւ կէս դարի պատմութիւն ունի հայ տպագրութիւնը: Այդ ժամանակւայ ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել է ոչ միայն հարուստ ինքնուրոյն գրականութիւն, այլեւ թարգմանել է մայրենի լեզւով գիտութեան եւ գրականութեան համաշխարհային դասական հեղինակներին: Հայերէն լոյս են տեսել Արիստոտելի, Պլատոնի, Ցիցերոնի, Սենեկայի, Թուկիդիտէսի, Քսենոֆոնի, Տակիտոսի, Սալիւստոսի, Հոմերոսի, Վիրգիլիոսի, Սոֆոկլէսի, Եւրիպիդէսի, Ֆիրդուսու,*

*Դանթէի, Խայեամի, Տասսոյի, Շեքսպիրի, Սերւանտէսի,Վոլթերի, Մոլիերի, Հիւգոյի, Գեօթէի, Շիլլերի, Տոլստոյի, Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Տուրգենեւի, Գորկու, Չեխովի եւ շատ ուրիշների երկերը:*

*Հայ տպագրութեան միջոցով մարդկութեան սեփականութիւնը դարձաւ որոշ յոյն եւ լատին դասական հեղինակների այն երկերը, որոց բնագրերը կորել են, իսկ նրանց հայերէն թարգմանութիւնները, որ կատարւել էին հինգերորդ դարում, մնացել էին եւ հասել մեր ժամանակները:*

*Հայկական տպագրութեան առաջին օջախ՝ Վենետիկից յետոյ, հետզհետէ տպագրութեան օջախներ են ստեղծւում Կոստանդնուպոլսում, Հռոմում, Նոր Ջուղայում, Ամստերդամում, Փարիզում, Մարսէյլում, Լիվոռնոյում, Զմիւռնիայում, Լոնդոնում, Մադրասում, Կալկաթայում, Թրիեստում, Պետրգբուրգում, Նոր Նախիջեւանում, Հաշտարխանում, Վիեննայում, Մոսկւայում, Թիֆլիսում, Երուսաղէմում, Թէոդոսիայում եւ այլ հայկական գաղութներում:*

*Աշխարհի համարեա բոլոր երկրներում գոյութիւն են ունեցել հայկական տպագրութեան օջախներ: Նրանց ցանցը տարածւում է Ամերիկայից մինչեւ Ճաւա, Եգիպտոսից մինչեւ Շւեդիա: Այդ օջախների թիւը հասնում է մի քանի հարիւրի, որոնցից մօտ երեք տասնեակը հանդիսացել են խոշոր կուլտուրական օջախներ: Կանգ չառնելով բոլոր օջախների պատմութեան ու նրանց ունեցած գործունէութեան վրայ այստեղ մենք կը տանք ընդհանուր ծանօթութիւններ միայն մի քանի կարեւորագոյն օջախների մասին:*

*Ինչպէս վերը նշւեց հայ տպագրութեան օրրանը եղել է Իտալիայի Վենետիկ քաղաքը: Դեռեւս Կիլիկեան հայկական իշխանութեան օրերից (XI-XIVդդ.) հայերը առեւտրական սերտ կապ են ունեցել Վենետիկի հետ:*

*Մինչեւ հայերէն առաջին գրքի տպագրութիւնը, Վենետիկում երկար ժամանակ գոյութիւն ունէր հայկական գաղութ: Առաջին գրքի տպագրութիւնից յետոյ դեռեւս երկար ժամանակ այդ գաղութը նշանակալից դեր է կատարել հայ իրականութեան մէջ: Իսկ 1717 թւին, երբ XVIII դարի հայ ականաւոր լուսաւորիչ Մխիթար Սեբաստացին իր միաբանութիւնը փոխադրում է Վենետիկի Ս. Ղազար կղզին, Վենետիկը այնուհետեւ դառնում է հայ տպագրութեան խոշորագոյն օջախներից մէկը:*

*Վենետիկը առաջին քաղաքներից մէկն էր, որտեղ դեռեւս 1469 թւից մուտք էր գործել Գուտենբերգի անմահ գիւտը: Եւ այն ժամանակ, երբ լոյս տեսաւ Յակոբ Մեղապարտի «Պարզատումարը», Վենետիկում գործում էին արդէն երկու հարիւրից աւելի տպարաններ, լոյս էին տեսնում շատ լեզուներով գրքեր: Մեր առաջին տպագրիչ Յակոբ Մեղապարտը չէր կարող անտարբեր մնալ այդ ժամանակւայ Վենետիկի տպագրական ու հրատարակչական եռուզեռի, ժողովրդի զարգացման գործում տպագրութեան ունեցած խոշոր դերի նկատմամբ: Նա եղաւ առաջինը մեր իրականութեան մէջ, որ օգտւեց մարդկութեան ստեղծած հանճարեղ այդ գիւտից՝ անմահացնելով իրեն մեր մշակոյթի պատմութեան մէջ:*

*Տպագրիչ Յակոբ Մեղապարտը, որ հաւանաբար ունեցել է եւ իր գործակիցները, հայկական բոլորագիր հիման վրայ ստեղծում է հայերէն տպագրական տառեր եւ 1512թ. տպագրում է իր «Պարզատումարը» որը ինչպէս նշւեց, ժողովրդի գործածութեան համար մի հրատարակութիւն է: Նրա մէջ ցոյց են տրւած եկեղեցական տօները եւ, բացի դրանից, ինչպէս սովորաբար լինում էր այդ ժամանակ, բովանդակում է նոյնպէս մեկնաբանութիւններ, հետեւեալ ենթաբաժիններով «Կաղանդացոյց», «Նշանացոյց», «Երազացոյց», «Ծննդեան տղայոց» եւ «Մարմնախաղաց»:*

*Տպագրիչ Յակոբ Մեղապարտը հետեւեալ 1513 թւականին նոյն տպարանում տպագրում եւ հրատարակում է չորս անուն ուրիշ գրքեր, դրանք են «Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Աղթարք» եւ «Տաղարան»: Սրանք են հայ տպագրութեան երախայրիքը՝ հայերէն առաջին տպագիր գրքերը: Այդ հրատարակութիւնների շարքում առանձնապէս ուշադրութեան արժանի է վերջինը՝ «Տաղարանը», որը մի ժողովածու է եւ բովանդակում է մեր միջնադարի բանաստեղծներ Յովհաննէս Թլկուրանցու, Ֆրիկի, Մկրտիչ Նաղաշի տաղերը, ինչպէս նաեւ Ներսէս Շնորհալու 137 չափածոյ հանելուկները:*

*Հայ առաջին տպագրիչ Յակոբ Մեղապարտի հրատարակչական գործունէութեան գնահատմամբ հարցում իրաւացի չեն եղել մեր որոշ բանասէրները պահանջելով, որ նա իր այդ հրատարակութիւնների բովանդակութեան (մասնաւորապէս «Աղթարքի» եւ «Ուրբաթագրքի») համար կանգնի «հասարակական դատարանի» առաջ: Եթէ համեմատում ենք Յակոբի հրատարակութիւնները այդ ժամանակւայ եւ նոյնիսկ դրանից յետոյ ուրիշ ժողովուրդների առաջին տպագրութիւնների հետ, տեսնում ենք, որ վերջիններս իրենց տպագրութեան առաջին շրջանում հրատարակել են միայն կրօնական ու եկեղեցական գրքեր, շատ յետոյ*

*միայն աշխարհիկ բովանդակութեամբ գրքեր: Յայտնի է, ռուս առաջին տպագիր գիրքը լոյս է տեսել 1564 թւին: Այդ առաջին գրքից մինչեւ XVII դարի երկրորդ կէսը տպագրւել են բացառապէս կրօնա-եկեղեցական գրքեր՝ Աւետարաններ, գործ առաքելոցներ (ապոստոլներ), ժամագրքեր, խորհրդատետրեր եւ այլն:*

*Առաջին գիրքը, որ իր բովանդակութեամբ կիսաեկեղեցական եւ կիսաաշխարհիկ է, տպագրւել է 70 տարի յետոյ 1634 թւականին: Իսկ մաքուր աշխարհիկ բովանդակութեամբ առաջին գիրքը տպագրւել է 1647 թւականին:*

*Մինչդեռ, Յակոբ Մեղապարտի հրատարակութիւնները, բացի մէկից («Պատարագատետր»), եղել են ժողովրդական, աշխարհիկ բնոյթի գործեր: Ինչ վերաբերում է «Ուրբաթագիրք»-ին եւ «Աղթարք»-ին, մասամբ եւ «Պարզատումար»-ին, որոնց բովանդակութիւնը, ինչպէս ասում են մեր բանասէրներից ոմանք, «յետադիմական», «սնոտիապաշտական» է, որի համար եւ դատապարտում են նրան, ճիշտ չեն: Մեր կարծիքով, նման բովանդակութեամբ ժողովրդական գրքերի հրատարակութիւնը տպագրիչի կողմից տուրք է եղել իր ժամանակին, ժողովրդի պահանջներին: Յակոբ Մեղապարտից շատ յետոյ էլ, անգամ մինչեւ մեր*

*դարի 20-ական թւականները հայերէն գրքեր էին տպւում երազահանով, վիճակախաղով եւ այլն, բայց ոչ ոքի մտքով չէր անցնում նման գրքերի հեղինակներին եւ դրանց տպագրիչներին «հասարակական դատարանի» առաջ քաշել: Վերջապէս միայն «Տաղարանն» էլ բաւական է, որ մեր առաջին տպագրիչը իր հրատարակչական գործունէութեամբ դասւի մեր կուլտուրայի առաջադէմ ներկայացուցիչների շարքը:*

*Աղբիւր՝*

*Հատուած «Հայ տպագիր գիրքը եւ տպագրութիւնը» գրքից, Երեւան, 1963, չնչին խմբագրութեամբ*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ԳՈՂՏՐԻԿ ՊԱՏՈՒԱՆԴԱՆ ՄԸ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ ԿՏԱԿ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

***ԽԱՉԱՏՈՒՐ Ի.ՓԻԼԻԿԵԱՆ, ԼՈՆՏՈՆ***

*Մեր բանիմաց մտաւորականները, որոնք այցելած են Երեւան՝ մեր գրեթէ երեք հազարամեայ Մայրաքաղաքը զորս այս տարի կոչուած է որպէս Միջազգային Գրքի Քաղաք, ընդվզումով կը տեղեկանան որ Երեւանի մէջ ներկայիս ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ գրադարան բաց կայ, որոնց մէկն ալ հաւանական բակման ենթարկուելու վտանգին տակ է:*

*Մանկական օրերէս, Եղեռնը յաղթող համբուրելի ծնողացս Գիր-Միտքի թանկագին պտուղի Սէրը՝ Գիրքի Սէրը, էութեանս մէջ ներծծուած, խորացաւ ու իմաստնացաւ՝ պատանեկան օրերէս սկսեալ. ու մնաց այդ Սէրը իբրեւ գեղեցիկ ընկերակից մը կեանքիս, լռելեան խօսուն ու խոհուն, անանձնական ուրախութեան ոսկի բանալի մը յաճախ, եւ մանաւանդ իբրեւ ստեղծագործ աշխատանքի յուսադիր մղիչ ուժ մը՝ ընդմիշտ բաղձալի:*

*Ահա թէ ինչու Երեւանի փակ գրադարանները օր մը վերաբացուելու յոյսով դրդուած, վերոյիշեալ խոհական յուշս ասմունքային հեւքով շարադրելով՝ նկարած եմ զայն մեր Մեծասքանչով ահա այսպէս,*

Այո, Գիրք, գիրք ու նորէն գիրք
Ծով գիտութեանց մանրուսում մը
Անեզր ճամբու բաց եզերք մը
Գիրք՝ միտքի կիրք
Անիաս հոգւոյ լիութեան գիրկ:

*****

Լաւ է պահել
Նոյնիսկ գրկել դիրքն այդ գիրքի
Աւելի լաւ՝ կարդալ կիրքով
Ամենալաւ՝ ապրիլ նաեւ գիրքի նման
Կեանքի առաջին էջէն մինչեւ
Վերջին էջն ալ...բաց գիրքի պէս:

*Երեւանի անհետացած գրադարաններու ողբալի ղօղանջը զարթնեցուց մտքիս մէջ բոյն դրած Թումանեանի ԿՏԱԿը, զորս բազմիցս խոկալու մղած է զիս թէ երբ եւ ինչպէս ներկայացնել, տարածել զայն լայնօրէն ընթերցողին: Ահա ժամանակը ինքն է որ կը պարտադրէ բոլորիս այդ քայլը առնելու: Զարթնած է մտքիս մէջ ԿՏԱԿի հետեւեալ դիմանկարը...,*

Անթառամ Տաղեր
Միտքի ու Սիրտի թելերով հիւսուած
Երգիծական Նշխարներ
Հայ Ժողովուրդը, Հայոց Եկեղեցին ու Հայոց Պետականութիւնը չարաշահող
Հայ վաշխառուներու, սրբապիղծ մանկլաւիկներու եւ
Մետաասաներորդ ժամու յղփացած մաֆիոզներու
***ԿՏԱԿը***
*«Գրանցուած» Ամենայն Հայոց Բանաստեղծ*
***ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ*** *ի*
*Կատակաշարժ, Մարգարէաշունչ Գրչով*
*1899 ին...*

*Թումանեանի ԿՏԱԿը արժէ անյապաղ վերահրատարակել որ մեր ժողովուրդի գլխուն թառած չարաշահողներու ու գրադարաններ փակող ինքնիշխանութիւններու Լացի ու Տառապանքի Պարիսպներուն վրայ արձանագրուի, առ ի զգաստացում բոլորին՝ որոնց խիղճը դեռ չէ մարած Մամոնայի պաշտամունքի եաթաղանը...*

*Ահաւասիկ այդ՝ քաղուած ուղղակի Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ Երկերի Ժողովածու Չորս Հատորով, «Հայաստան», Երեւան 1969 - Երկրորդ Հատորէն, էջ 341-343, նոյն հրատարակուած ուղղագրութեամբ:*

## ԿՏԱԿ
## Յովհաննէս Թումանեան

Դէ գրի, տէր հայր: «Յանուն հօր եւ որդոյ...»
(Այսպէս անիրաւ բա՞ն էք տեսել, տօ՞.
Կեանքս մաշելով փող դիզեմ այսքան,
Հիմի իմ ձեռքով տամ սըրանըրա՞ն...
Բայց դէ ի՞նչ անեմ, հետս ո՞ւր տանեմ...
Գոնէ այս վերջին առուտուրն անեմ,
Գուցէ կաշառեմ Աստծուն ու ազգիս,
Սրանով փրկեմ անունս ու հոգիս...):
Դէ գրի, տէր հայր: Ուշքս դեռ վրէս,
Կտակ եմ անում իմ ազգիս այսպէս:

Ամէնից առաջ ես իմ կտակում
Իմ մեռած եղբօր որդոցն եմ զրկում.
Կտակ եմ անում, որ նրանք երբեք
Չուտեն իմ փողից եւ ոչ մի կոպէկ:
Ջուր տեղը իմ դէմ դատ էին բացել,
Թէ իրանց բաժնին ես եմ տիրացել.
Լաւ էր, որ հազիւ պրծայ կաշառով,
Մարդիկ էլ տեսան ընկել եմ շառով...

Գրի մեր ժամին մի հարիւր թուման,
Հետն էլ այսպիսի մի անխախտ պայման,
Որ եկեղեցու գաւթում ինձ թաղեն,
Կնոջս համար էլ կողքիս տեղ թողեն,
Տարին հինգ անգամ պատարագ անեն,
Հոգիս անպատճառ դրախտը տանեն.
Սրանից յետոյ հոգան ինձ վրայ,
Հոյակապ արձան դնել մարմարեայ,
Ոսկի տառերով վըրան փորագրած,
Թէ ազգիս համար ինչեր եմ արած:

Վանքի դպրոցին գրի մի գումար,
Որ իմ անունով, իմ հոգու համար
Որդեգիր պահեն նըրա տոկոսով.
Ամէն տարի գան խմբով, հանդէսով
Դամբանիս վրայ գովք ու ճառ ասեն,
Ազգի մեծերի շարքում ինձ դասեն,
Պատկերս էլ կախեն դպրոցի պատից,
Թէկուզ մի քիչ ցած մեր հայրապետից:
Ապա այս տունը, որ կեղծ թղթերով,
Հոգիս սեւելով, սըտով ու զոռով,
Իբրեւ պարտքի տեղ, առա այն խեղճից
Ու իրան լալով դուրս արի միջից...),
Իմ յօժար կամքով, իմ վերջի օրին
Այն էլ տալիս եմ մեր, մայր աթոռին,
Որ վեհափառը գրի մի կոնդակ,
Անունս սփռի աշխարհի բովանդակ
Եւ ինձ օրհնանքի այնպէս մի գիր տայ,
Որ երկնքումն էլ Աստուած հաւատայ...

Դրանից յետոյ մի գումար գրի
Յօգուտ մեր ազգի խեղճ ու որբերի
Ընկերութեանը Բարեգործական,
Որ գլուխն անշարժ մնայ յաւիտեան,
Նրա տոկոսը մեր մեծ տօներին
Բաժնեն (իմ զրկած) խեղճ ու որբերին,
Ամէն մէկին տան մի մի աբասի,
Որ ուտի եւ հոգուս ողորմի ասի:
ԵՒ Հայպա, օրհնուած, տանու տէրտէրին
Ժամոց չէ՞ս տալիս քո հոգու խերին.
Քանի վախտ ունես, այդ էլ ասա շուտ...
Ասա տանըցիք տան լաւ կողոպուտ,
Ոսկի սիաթըղ, նոր շորերըդ տան,
Որ հեշտ անց կենաս դուռն արքայութեան...
ԵՒ Լաւ, տէր հայր, այդ էլ քեզ եմ կտակում,
Որ ինձ միշտ յիշես քո պատարագում,
Դագաղիս վրայ մի քարոզ ասես,
Թէ ինչ հոգեւէր, մեծ մարդ էի ես...

Այս կտակն արաւ հայ բարերարը
Ու մեռաւ գնաց այն միւս աշխարհը.
Միշտ երախտագէտ մեր ազգը հայոց
Նրան հըռչակեց ազնիւ բարեգործ,
Իր ժամի զաւթում թաղեց ու մարմար
Արձան կանգնեցրեց իր գործքին յարմար,
Վըրան էլ գրեց պերճ տապանագիր.
ԵՒ Ո՛հ, վսեմ հոգի, դու խաղա՛ղ հանգիր,
Թէեւ դու մեռար, բայց միշտ քո հոգին
Հսկում է բարձրից քո թշուառ ազգին...

Բայց երբ որ գնաց այն միւս աշխարհը
Եւ ուզեց մտնել արդարոց շարը,
Հանեց օրհնանքի տարած պատճէնը,
Տէրն մեր կարդաց ու գցեց դէնը.
ԵՒ Քո սիրտը հանիր, ասաց, հողեդէն,
Այնտեղ են գրուած գործերդ ամէն:
Եւ մարդու սիրտը կարդաց մեր տէրը,
Ուր տպուած էին նրա գործերը.
Կարդաց չա՛ր գործեր, եւ նաեւ կտակը,
Եւ... իսկոյն դրկեց դժոխքի տակը:

1899

# ՆԱՄԱԿ ՀԱՅ ԱԶԳԻՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*էլ՝ կազմել 150,000 դրամ, ինչն այսօր նոյնիսկ առաջին անհրաժեշտութեան ապրանքներ ձեռք բերելու համար զգալիօրէն չի բաւականացնի:*

*Ստացւում է, որ մեր հասարակութեան զգալի մեծամասնութիւնը՝ մօտ 90%-ը, պոտենցիալ Հայաստանը լքողներ են, եւ նրանց հետ է պահում միայն հնարաւորութեան բացակայութիւնը, ինչն էլ ժամանակի խնդիր է: Միւս խումբը, ով չափից շատ լաւ է զգում իրեն Հայաստանում ոչ միայն չի մտածում գնալու մասին, այլ նաեւ բթամիտ լինելու պատճառով չի կարողանում կանխատեսել մեծամասնութեան հեռանալու արդիւնքում իր եւ իր սերունդների վտանգի տակ լինելու փաստը: Պետութիւնը չի կարող գոյատեւել մի խումբ մարդկանց քմահաճոյքների հաշուին կամ ծառայել մի խումբ մարդկանց: Այս տիպի պետութիւնները միշտ կործանուել են, իսկ այդ խմբի ու նրանց ընտանիքի անդամների հետ էլ մեղմ ասած դաժան են վարուել:*

*Ուստի ես կ'ուզենայի, որ այս յօդուածը կարդար թէ այդ խումբը, ով ոսկու փայլից կուրացած բթացել է, թէ այն խումբը, որն արդէն վաղուց թքել է Հայաստան պետութեան վրայ եւ միայն ֆիզակապէս եւ ժամանակաւոր է այստեղ: Առաջին խումբը լաւ կը լինէր, որ գիտակցէր, որ հազարամեայ պատմութիւն ունեցող երկրագունդ մոլորակում դեռ ոչ մէկ, ոչ մի անհատ, ընտանիք, կենդանի չի կարողացել արիւնով, անարդարութեամբ, խորտակած ճակատագրերով եւ այլոց երեխաներին սոված պահելով ձեռք բերուած հարստութիւնը պահել, հատուցումը միշտ համարժէք է եղել՝ սա կեանքի չգրուած օրէնքն է եւ ոչ մի կապ չունի ոչ կրօնի, ոչ բարոյականութեան եւ ոչ էլ խրատագիտութեան հետ:*

*Յուսահատուած խմբին էլ կ'ուզենայի, որ երբեք չկորցնեն իրենց կամքի ոյժը եւ, անկախ ամէն ինչից, չատեն Հայաստանը, քանզի մեր հայրենիքի եւ ազգի մասին մենք չենք կարող դատել ճակատագրի բերումով ներքեւից վերեւ միամտօրէն յայտնուած անձանցով: Սա բոլորիս երկիրն է, թէ փողի գերին դարձած սողունների, թէ բարձր արժէքների համար կեանք տուողների եւ թէ ստեղծուած իրավիճակի դէմ պայքարողների: Այս պահին մեզ պէտք են մեր ազգի բոլոր ներկայացուցիչները, ովքեր գիտակցում են հարցի լրջութիւնը, մեզ պէտք է օգնել միմեանց, օգնել մեր ազգին, որպէսզի չվերածուենք մահացած հասարակութեան եւ մեռեալ պետութեան:*

Հայ news am

# ՏՕՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՀՆՉԱԿԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ



*Տեսարան մը դասախօսութեան ներկայ եղող հանդիսականներէն*

*Շարունակուած էջ 1-էն*

*եան իր բացման խօսքին մէջ նշեց որ Հնչակեան Կուսակցութեան 125 ամեակին առթիւ Հարաւային Գալիֆորնիոյ մէջ նախաձեռնուած հինգ միջոցառումներու շարքին ասիկա երրորդն է եւ նուիրուած մեր կազմակերպութեան արխիւներուն: Ան ջերմօրէն ողջունեց Լիբանանէն ժամանած գլխաւոր խօսք առնող Տօքթ. Եղիկ Ճէրէճեանը, որ շրջանէ մը ի վեր նուիրուած է Հնչակեան արխիւներու մէկտեղման շնորհակալ աշխատանքին:*

*Արեւմտեան Ամերիկայի Ս.Դ.Հ.Կ.ի Վարիչ Մարմնի անդամ Ընկ. Սուրէն Խուտանեան ամփոփ գիծերով ներկայացուց ընկ. Տօքթ. Եղիկ Ճէրէճեանի համառօտ կենսագրականը: Ծնած է Պէյրութ 1957ին: Աւարտած է Երեւանի բժշկական Ինստիտուտի ատամնաբուժական բաժինը: 1995էն ի վեր մաս կը կազմէ Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական Վարչութեան: 1992ին ժողովուրդի ազատագրական շարժման եւ սուլթանական Թուրքիոյ դէմ մղուած պայքարին մէջ: Յարգելի զեկուցաբերը ցաւ յայտնեց որ Մայր Կուսակցութեան խիստ կարեւոր արխիւները ցարդ չեն մէկտեղուած եւ շատերն ալ կորսուած: Գլխաւոր պատճառներէն են Համիտի իշխանութեան բռնարարքները, կեդրոնատեղիներու վրայ կատարուած անակնկալ խուզարկութիւններն ու բռնի տեղահանութիւնները, ռմբակոծումներու հետեւանքով յառաջացած հրդեհներն ու փլուզումները (Լիբանանի մէջ) եւ յատկապէս կեդրոնական վարչութեան վայրի փոփոխութիւնները:*

*Կեդրոնացեալ արխիւի չգոյութեան հետեւանքով որոշ շրջաններու մէջ արխիւները դրուած են կարգ մը ընկերներու բծախնդիր հոգածութեան ներքեւ:*

*Տեղի ունեցաւ հետաքրքրական տեսաերիզի մը ցուցադրութիւնը: Ներկաները մօտէն ծանօթացան Հնչակեան արխիւներու*



*Ներկաները կը դիտեն ցուցադրուած արխիւային փաստաթուղթեր*

*ընտրուած է Լիբանանի Խորհրդարանի Երեսփոխան եւ վերընտրուած է 1996ին, 2000ին եւ 2005ին: Ունի պատմական նիւթերով հրատարակուած հինգ հատորներ, որոնցմէ մին «Հայկական Ջարդերը ճի՞նչ է ուղղուած մարդկութեան խղճին» լոյս տեսած է արաբերէն լեզուով, 1985 թուին:*

*Ելոյթ ունենալով ընկ. Տօքթ. Եղիկ Ճէրէճեան բնութագրեց ժողովուրդներու եւ կազմակերպութիւններու պատմութեան մէջ արխիւներու պահպանման կարեւորութիւնը: Անուրանալի է Հնչակեան կուսակցութեան դերը հայ մասին Պէյրութի Սահակեան Լիսէի հանդիսասրահին մէջ վերջերս տեղի ունեցած միջոցառումին: Այստեղ ընկ. Տօքթ. Եղիկ Ճէրէճեան մանրամասնօրէն բացատրութիւններ տուաւ ցուցադրուած արխիւներու մասին: Անոնցմէ շատեր նոր յայտնաբերուած վաւերագրութիւններ էին, որոնք կ'արտացոլացնէին մեր պատմութեան տարբեր հանգրուաններու կարեւոր իրադրութիւնները (Նամակներ, ատենագրութիւններ, հաղորդագրութիւններ, շրջաբերականներ, իրեղէններ եւայլն):*

*Ներկայիս՝ աշխարհի տարբեր քաղաքներու պատմութեան թանգարաններու եւ պետական արխիւներու մէջ՝ կան բազմաթիւ վաւերաթուղթեր, որոնք կը կարօտին լուրջ ուսումնասիրութեանց: Մինչեւ հիմա եղածը արխիւներու յայտնաբերումն էր Հնչակեան Կուսակցութեան բազմապիսի գործունէութեան:*

*Տօքթ. Եղիկ Ճէրճէեան սկիզբը դրած է արխիւներու մէկտեղման խիստ շնորհակալ աշխատանքին: Տակաւին բաւական լայն ճամբայ մը կայ կտրելիք: Այս գործը պէտք է շարունակուի մեծ բծախնդրութեամբ, յանգելու համար կեդրոնացած եւ ապա թուայնացուած (digital) ու ժամանակակից պայմաններուն համապատասխանող իրավիճակի: Այլ խօսքով հինը փոխանցել նորին, զայն մատչելի դարձնելու համար մեր ապագայ սերունդներուն:*

*Երեկոյթի աւարտին Լոս Անճելոս գաւառի գլխաւոր շէրիֆ Լի Պաքայի անունով իր փոխանորդը շէրիֆ Կէրի Նալպանտեան «Պատուոյ Գիր»ով մեծարեց Տօքթ. Եղիկ Ճէրէճեանը, առ ի գնահատութիւն իր պատմա-մշակութային եւ գաղութային ծառայութեան:*

*Փակման խօսքով հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ.ի Արեւմտեան Ամերիկայի ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեան: Ան արժեւորելէ ետք Տօքթ. Ե. Ճէրէճեանի այս օգտաշատ նախաձեռնութիւնը, կատարեալ յաջողութիւն մաղթեց իր յետագայ ծրագիրներուն:*

*Սոյն ինքնատիպ հանդիպման երկրորդ բաժինին մէջ տեղի ունեցաւ հարցազրոյց եւ ապա ճոխ հիւրասիրութիւն:*

*Գ. ՄՈԼՈՅԵԱՆ*

# ԵՐԲ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ Է ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

*Շարունակուած էջ 1-էն*

Տարակոյս չկայ, որ ան ալ ուզեն ճողարկել այդ լայնածաւալ պայքարի ճշմարիտ միտք բանին՝ յստակ է բոլորին, թէ խնդրոյ առարկայ հիւլէական զգայուն ծրագրի հետապնդման արգիլման մէջ, ուրիշ պատճառ չէր կրնար գոյութիւն ունենալ, եթէ ոչ՝ պարզ ու մէկին, իսրայէլեան պետութեան ենթադրութիւնը: Իսրայէլ անոր մէջ կը տեսնէր իր երկրի ապահովութեան սպառնացող վտանգ: Ենթադրութիւն՝ որ առ ի չգոյէ իրաքեան հայրենիքին արժած էր ողջ աչքով դիտուած ողջակիզումը:

Ներկայ դրութեամբ իսրայէլեան բարձրագոյն կարգի կառավարական դէմքերէն՝ Մօշէ Եալոն կը գտնէր, թէ հակառակ Միջազգային ընտանիքի կողմէ նախաձեռնուած պատժամիջոցներու շօշափելի արդիւնքներուն՝ Թեհրան, տակաւին չէր հրաժարած իր հիւլէական ծրագրէն: Կ'ըսէր ան. «Ժամ կայ պատժամիջոցներու, եւ ժամ՝ պարսկական հիւլէական ծրագրին, որ կը մօտենայ իր կարմիր գծին, որմէ անդին, Թեհրան պիտի ունենար իր ատոմական զէնքը...»:

Մօշէ Եալոն հրամայական կը գտնէր նիւթական, քաղաքական կամ այլ կերպի պատժամիջոցներու առաւել լուրջ սաստկացումը, որոնց շարքին պէտք էր ընտրել նաեւ ռազմական տարբերակը:

Ահմէտի Նէժատի, վերահասու՝ իր հիւլէական հաստատութիւններու դէմ իսրայէլեան սպառնալիքներուն, անայլայլ կերպով կը բացայայտէ իր դիրքորոշումը: Ան դիտել կու տար, թէ «Պարսկաստան նախայարձակ չէ եղած բնաւ երբեք: Բայց գիտէ լաւապէս պաշտպանել ինքզինք, ինչ որ, անցեալին, զղջացնել տուած է իրենց վրայ նախայարձակները...»:

Միջազգային ընտանիքէն ներս, շրջանէ մը ասդին ծաւալ ստացած՝ միակողմանի, ոչ հաշտարար, զինու ուժով կամք պարտադրելու, նաեւ, խռովեալ երկիրներէ ներս ստեղծուած երկպառակութիւնները այլեւայլ միջամտութիւններով հրահրելու զգացական բնոյթ ստացած քաղաքականութիւնը, առաւել եւս կը մթագնէ արդէն իսկ իր ճգնաժամը ապրող Միջին Արեւելքի երկնակամարը:

Պատրա՞ստ ենք իբրեւ ժողովուրդ եւ հայրենիք՝ դիմագրաւելու կործանարար անակնկալները, թէ ոչ, ըստ մեր ազգային աւանդութեան ապաւինինք գալիք տիրող պայմաններուն...

# ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀԻԼԱԼԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՒ

*Շարունակուած էջ 7-էն*

*մունքով ստեղծեցին տօնական մթնոլորտ:*

*Պր. Յ. Հիլալեանի պարգեւատրումը շնորհաւորելու համար ողջոյնի ջերմ խօսքերով ելոյթներ ունեցան Ա. Մ. Յովսէփեան վարժարանի տնօրէն Տիար Շահէ Մանկրեան եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Սարգիս Քհնյ. Բեդոյեան, որոնք շեշտեցին Յարութիւն Հիլալեանի ծառայասիրութիւնն ու նկարագրի գեղեցիկ յատկանիշները:*

*Շնորհակալական խօսքով հանդէս եկաւ օրուան մեծարեալը: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց առաջնորդ Յովնան Սրբազանին, Ամենայն Հայոց Հայրապետին, իրենց ցուցաբերած նեցուկին եւ գնահատանքի արտայայտութիւններուն համար:*

*Իր փակման խօսքին մէջ առաջնորդ Յովնան Սրբազանը յատկապէս նշեց «հայրը՝ ուր որ ալ ըլլայ, պէտք է գլխաւոր պարտականութիւն նկատէ հայ ապրիլ, սիրելով մեր լեզուն ու աւանդութիւնները: Այս ոգիով առաջնորդուեցաւ Հիլալեան ամոլը, ծառայելով եկեղեցիին ու դպրոցին: Չափազանց գնահատելի կը գտնենք ձեր ծառայասիրութիւնը, որ մարդուն կեանքը իմաստաւորող ամենագլխաւոր յատկանիշն է: Պատիւ ստացաւ եւ միանգամայն պատիւ բերաւ հայ գաղութին»:*

*Ճաշկերոյթն աւարտեցաւ ուրախ լուրով մը: Յովնան Սրբազանը յայտարարեց որ Տէր եւ Տիկ. Յարութիւն Հիլալեան 100 հազար տոլար կը նուիրեն առաջնորդանիստ Ս. Ղեւոնդ Մայր տաճարին եւ այսպիսով մաս կը կազմեն Եկեղեցւոյ կնքահայրերու հոյլին: Այս լուրն ընդունուեցաւ ջերմ ծափահարութիւններով:*

*Պատիւս արժանաւորաց:*

*Գ.Մ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՆԱԽԱՁԵՌՆԵՑ ԻՐ ԵՕԹԵՐՈՐԴ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻՆ

Շարունակուած էջ 7-էն

րուն: Ջութակահար Guillaume Sutre եւ քնարահար Kyughee Kim -Sutre, իրենց անվիճելի տաղանդաշատ կատարողութեամբ հմայեցին ներկայ հասարակութիւնը, որ դժուար թէ յօժարեցաւ բեմէն անոնց հեռացումին:

Claude Debussy- « Danse Sacre» եւ « Danse Profane»ի յօրինումները քնարի, ջութակի, երկրորդ ջութակի ( viola) եւ թաւջութակի վրայ խմբային կատարողութեամբ հանդէս եկան քնարահար՝ Kyughee Kim -Sutre, ջութակահարներ՝ Մովսէս Պօղոսեան եւ Guillaume Sutre, Միջակ ջութակահար՝ Richard ONeil եւ թաւջութակահար՝ Ronald Leonard, որոնք նոյնպէս գմայլանքի պահեր մատուցին հանդիսասրահէն ներս:

Այնուհետեւ, առաջին անգամ ըլլալով Քալիֆորնիոյ երաժշտասէր հասարակութեան կը մատուցուէր հայազգի արժանաւոր զաւակ Էտկար Մանասի ( 1875-1964) -Sonato for Violon and Piano,- Lento Appassionato, -Animato, եւ -Allegro Moderato յոյժ գրաւիչ յօրինումները, կատարողութեամբ՝ Մովսէս Պօղոսեանի (ջութակ) եւ Judith Gordon-ի դաշնակ: Էտկար Մանաս ծանօթ է իբրեւ համբաւաւոր յօրինող, խմբավար եւ երաժշտագէտ: Ծնած է Պոլիս: 13 տարեկանին ցոյց տուած ըլլալով երաժշտական շնորհներ, Մանաս կը ղրկուի Իտալիա, ուր Վենետիկի մէջ կը հետեւի Prof. Trivellini -ի դաշնակի դասընթացքներու: Յետագային կ'աշակերտէ յօրինող Luigi Bottazzo-ի: Ան պարգեւատրուած է ֆրանսական կառավարութեան կողմէ դառնալով Ակադեմիայի Անդամ: Էտկար Մանասի ձեռագիրներէն մեծ տոկոս մէ կը գտնուի Հայրենի արուեստի Թանգարանը:

Ընդմիջումէն ետք, յայտագրի վերջին մասը յատկացուած էր Gabriel Faure-ի ( 1862-1918) 1-Piano Quinted No. 2 in C Minor, Op. 115 2-Allegro vivo 3-Andante moderato 4- Allegro molto Այս բաժնի նուագարանային բարձրարուեստ կատարողութիւնը ստանձնած էին Վարդի Մանուէլեան եւ Guillaume Sutre, (ջութակ), Richard ONeil, (Միջակ Ջութակ), Ronald Leonard, Թաւջութակ եւ Judith Gordon-ի (դաշնակ):

Արդարեւ, բարձր մակարդակի յաղթական սկիզբ մը կարելի է համարել «Լարք Երաժշտական Ընկերակցութեան» «Դիլիջան» Սենեկայի Երաժշտութեան եղանակային եօթերորդ համերգաշարի առաջին, ներկայ ելոյթը, որ ոգեւորեց ներկայ երաժշտասէր հանդիսականները, որոնք ակնթարթ պիտի սպասեն համանուն համերգաշարի երկրորդ ելոյթին:

Ջերմօրէն կը շնորհաւորենք «Լարք Երաժշտական Ընկերակցութեան» Գործադիր Տնօրէն՝ վաստաշատ խմբավար Վաչէ Պարսումեանը, «Դիլիջան» Սենեկայի Երաժշտութեան գեղարուեստական Տնօրէն Մովսէս Պօղոսեանը, անոնց շուրջ հաւաքուած արուեստագէտներու հոյլը, որոնք ոչ մէկ ջանք կը խնայեն իրենց որդեգրած սրբազան առաքելութեան ճամբուն, յանուն հայ եւ օտար հանճարեղ երաժիշտներու ծանօթացման, ընդհանրապէս երաժշտական ճաշակի զարգացման եւ յատկապէս արուեստի ճամբով հայ եւ օտար համայնքներու կապերու սերտացման:

Նաեւ՝ կը մաղթենք բարի եւ յաջող երթ «Լարք Երաժշտական Ընկերակցութեան» եւ «Դիլիջան Սենեկայի Երաժշտութեան» եղանակային եօթերորդ համերգաշարի առթիւ:

## ԼԱՐՔԻ «ԹԱԳՈՒՀԻ» ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Շարունակուած էջ 7-էն

չինացի եղբայրներ՝ Քեննի եւ Քրիս Ջուաները, որոնց հայերէնով հնչող հայ բանաստեղծութիւնների պատգամներով յաճախ են աւարտուել մեր հանդէսները:

Անշուշտ, այս երեխաների համար գեղագիտական կրթութեան հետ միասին ապահոված է սնունդը: Այստեղ նրանք նախաճաշում են, ունենում են ագրատներ, ճաշում են պատրաստուած Լարքի նուիրեալ Տիկ. Իշխանուհի Պետրոսեանի հմուտ ձեռքերով:

Ես, որպէս «Թագուհի» ամառային ճամբարի տնօրէնուհի եւ որի անունը ի հպարտութիւն եւ ի պատիւ ինձ կրում է իմ անունը, ուզում եմ շնորհակալութիւն յայտնել բոլորին: Նախ ծնողներին, որոնք գնահատելով «Թագուհի» ամառային ճամբարի պատշաճութիւնն ու իւրօրինակութիւնը, իրենց զաւակներին ուղեկցում են մեր ճամբարը:

Շատ գնահատելի է բոլոր մանկավարժների Նարինէ Թադեւոսեանի, Նունէ Ալավերդեանի, Տօքթ. Կարինէ Աւագեանի, Էլնա Բորդիժանի, Փոլեթ Զարգարեանի, Յարութ Արգումանեանի, Տէր եւ Տիկ. վարդգէս եւ Իշխանուհի Պետրոսեանների եւ բազմաթիւ կամաւորների աշխատանքը, որոնց նուիրեալ եւ հոգատար աշխատանքի շնորհիւ այս տարի եւս «Թագուհի» ամառային ճամբարը աւարտեց իր գործունէութիւնը:

Իսկ ամէնից մեծ շնորհակալութեան արժանի է Վաչէ Պարսումեանը, Լարքի հիմնադիր առաջնորդը, հնարաւորութիւններ ստեղծելով այս օտար ափերում հայ մանուկներին հայ պահելու եւ ազնիւ նկարագիր փոխանցելու համար:

Արդէն անցել է երեք շաբաթ:

Սիրելի երեխաներ, մենք ձեզ շատ կարօտում ենք: Կարօտում ենք, բայց նաեւ ուրախ ենք, որ «Թագուհի» ամառային ճամբարը մնալու է ձեր յիշողութեան մէջ որպէս մանկութեան եւ պատանեկութեան տարիների գեղեցիկ հեքիաթ: Իսկ հեքիաթները չեն վերջանում, այլ շարունակւում են դէպի հեռուները:

Դէ ուրեմն յաւերժ ժպտացէք աշխարհին՝ գեղեցկատես ծաղկունք դարձած:

Ապրեցէք հայերէն, շնչեցէք հայերէն: Դա է մեր լինելիութեան խորհուրդը:

massispost.com
daily news updates

## ՍԹԻՖԸՆ ՀԱՐՓԸՐԻ ԳԱՆԱՏԱՆ

Շարունակուած էջ 6-էն

թենէն: Ան դեռեւս կը մոռնայ կամ անտեսել կ'ուզէ մեծամասնութիւնը գանատացիներուն (ֆրանքօֆոնները եւ անոնց հետ միասին միլիոնաւոր ոչ-անգլիասեռ քաղաքացիները Գանատայի) որոնք կը մերժեն օտար երկրի մէջ Անգլիական դրօշի տակ դեսպանատուն մտնել, իրենց Գանատական գործը հետապնդելու կամ փասփորթը նորոգելու: Հակառակ Հարփըրի 2006-ին արտայայտած վերի կարծիքին, Բրիտանական կայսրութեան արարքները անցեալին հեշտ ու անվնաս չէին, եւ ոչ ալ փայլուն, միլիոնաւոր ֆրանքոֆոն եւ այլազան երկիրներէ Գանատա ներգաղթած ոչ անգլիատոհմ գանատացիներուն համար: Ուշադրութեան արժանի է խօսքը Մոնթրէալի պետական երեսփոխան Ժուսթին Թրուտոյի (զաւակը՝ Գանատայի ամենէն շատ սիրուած վարչապետներէն նկատուող Փիէր Թրուտոյի որ Քէպէքի անջատման դէմ խիստ պայքարեցաւ), ուր ամիսներ առաջ ան կ'ըսէր թէ պիտի ուզէր Քէպէքը ինքնիշխան պետութիւն տեսնել, եթէ հաւատար որ Գանատան սկսած է դառնալ «Սթիֆըն Հարփըրի Գանատան»:

## ՎԵՐԱՄՈՒՏ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Շարունակուած էջ 8-էն

րուն եւ գնահատեց ծնողները, որոնք իրենց թանկագին զաւակները վստահած էին «Սահակ-Մեսրոպ» վարժարանի հովանիին՝ քաջ գիտնալով, որ հայկական եւ քրիստոնէական կրթօճախի մը մէջ անոնք պիտի ստանան հայեցի կրթութիւն եւ քրիստոնէական դաստիարակութիւն:

Ապա հոգաբարձութեան ատենապետ Կերի Ճրճըրեան փառք տուաւ, որ այս տարի եւս Աստուած արժանի ըրաւ գիրենք, որպէսզի դիմաւորեն 2012-2013 տարեշրջանը: Ան հոգաբարձութեան թարգմանը հանդիսանալով՝ յաջողութիւն մաղթեց ուսուցիչներուն եւ աշակերտներուն, յայտնելով, որ հոգաբարձական կազմը միշտ պատրաստ է օժանդակելու դպրոցիս վերելքին՝ նիւթապէս եւ բարոյապէս:

Այժմ հերթն էր լսելու Հայ Աւետ. եկեղեցիներու միութեան աւագ հովիւ վեր. Յովսէփ Մաթոսեանը, որ իր սրտաբուխ աղօթքներն ու օրհնութիւնները փոխանցեց աշակերտներուն եւ մաղթեց յաջող եւ անփորձանք տարի մը բոլորին՝ Աստուծոյ շնորհքով եւ Աստուծոյ ներկայութեամբ:

Այսպիսով, «Սահակ-Մեսրոպ»ի դռները բացուեցան եւ աշակերտները ուղղուեցան իրենց դասարանները՝ նոր տեսլականով եւ լաւատես մտորումներով, ձգտելու համար լաւագոյնին, բարիին եւ վսեմին:

Յաջողութիւններով եւ բարիքներով լի տարի մը ունենաք, սիրելի՛ աշակերտներ:

## ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏԸ

Շարունակուած էջ 8-էն

այլ նաեւ ծնողներ, ուսուցիչներ, բարեկամներ, վերջապէս երկու ամսուան բացակայութենէ վերջ Հայ Քոյրերու Վարժարանի ընտանիքը դարձեալ իրար հետ, ունենալով մէկ վսեմ նպատակ՝ ջամբել հայ մանուկին եւ պատանիին հայեցի առողջ դաստիարակութիւն, Քրիստոնէական խաղաղ եւ համերաշխ մթնոլորտի մէջ:

## ԱՆԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ...

Շարունակուած էջ 14-էն

շարժակառքեր ու «Եալլայ» դէպի Հայրենիք-Հայաստան: Թող ներող լինի ինձ ընթերցողը, որ մի փոքր շեղուեմ նիւթի շարադրանքից: Բեռնատար շարժակազմը Վրաստանով էր անցնում, հանդիպակաց կայարանում դանդաղացրել էր ընթացքը, մի հերարձակ տարիքաւոր կին քայլում էր նրա ընթացքի հետ: Երկու հոլանի ձեռքերի դէպի բեռնակառքեր բարձրացրած, դէմքից զայրոյթի շանթեր պայթած կանչում էր՝ «Հողեմ ձեր գլուխը, ո՞ւր էք եկել»: Հայ էր, երեւի քանի զաւակներ էր կորցրել Ռուսի ստեպներում մղուած կռւում եւ իր զարմից քանիներին էին երեսունական թուականներին տարել ցուրտ երկիր: Արդեօք իրաւացի՞ էր այդ կինը...:

Հասան երկիր: 1948 թուականի Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Համագումար, նրա առաջին քարտուղար՝ Գրիգոր Յարութիւնեանը պիտի յայտարարէր՝ «Արտասահմանից մեր երկիր ենք բերել մարդկանց, որոնք իրենց հետ բերել են մեր հասարակարգին ոչ յարիր բարքեր» Եւ վերջ: Մնացածը յաջորդ անգամ . . . :

Նրանց շատերի ոդիսականը աւարտուեց ցուրտ երկրում, Լոս Անջելեսի «Կանաչ Մարգագետիններում»...:

## ՌԱՄԻԼ ՍԱՖԱՐՈՎԻ ՈՃՐԱՅԻՆ ԱՐԱՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Շարունակուած էջ 13-էն

10) 2005 Դեկտեմբեր 15ին պղծած եւ կործանած են Ջուլֆայի (Նախիջեւան) հայկական 4000 միջնադարեան կոթողները՝ մեծ մասամբ 9րդ դարէն մնացած խաչքարեր:

Հայոց դէմ թշնամութիւնը կը շարունակէ մնալ Ազրպէյճանի հիմնական քաղաքականութիւնը: Կացութիւնը աւելի չվատթարացած եւ անհակակշռելի աստիճանի չհասած՝ լաւ կ'ըլլայ որ Մ.Ա.Կ. եւ աշխարհի հզօրագոյն պետութիւնները յատկապէս Մ. Նահանգներ եւ Ռուսիա ականջը ոլորեն ազերիներուն, նախքան որ Սփիւռքահայութիւնը պարտաւորուած զգայ փոխադարձութեան դիմել:

www.massisweekly.com

125 SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY THROUGHOUT HISTORY

# ACADEMIC CONFERENCE

Dedicated to the
125th Anniversary of the
Social Democrat Hunchakian Party

## PARTICIPANTS

Prof. Richard Hovannisian
Prof. Gerard Libaridian
Prof. Kevork Bardakjian
Prof. Ara Dostourian
Prof. Ara Sanjian
Prof. Hratch Tchilingirian
Dr. Garabet Moumdjian
Prof. Vahram Shemmassian
Dr. Vartan Matiossian
Rev. Dr. Abel Manoukian
Mr. Aram Arkun

## CO-SPONSORS

The Richard G. Hovannisian Chair in Modern Armenian History at the University of California
Los Angeles, CA

Armenian Research Center at the University of Michigan
Dearborn, MI

Woodbury University
Burbank, CA

National Association for Armenian Studies and Research
Belmont, MA

## ORGANIZED BY

Armenian Educational Benevolent Union (A.E.B.U.)
Nor Serount Cultural Association (N.S.C.A.)

## SATURDAY
## OCTOBER 27, 2012

9:00am - 5:00pm

## WOODBURY UNIVERSITY

7500 North Glenoaks Boulevard Burbank, CA

LIVEWEBCAST

for more information please visit our website
or scan with your mobile device
www.sdhp125.org

Seating is limited. Reservation recommended.
email: info@sdhp125.org
1060 N Allen Avenue, Pasadena, CA 91104 Tel.: 626.398.0506

Following the conference Dinner/Discussion with the Academics
Donation: $100/person